

### ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՄԻԱԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԻ ԵՒ ԴԵՂՈՐԱՅՔԻ ՆԵՐԱԾՄԱՆ ՄԵՆԱՇՆՈՐԻ ԶՆՋՈՒՄԸ՝ ՔՆՆԱՐԿՈՒՄԻ ԱՌԱՐԿԱՅ

Նախարարաց խորհուրդի այսօրուան նիստին քննարկուելիք առեւտրական միակ ներկայացուցիչի եւ դեղորայքի ներածման մենաշնորհի ջնջումի ծրագիրը երէկ առանցքը հանդիսացաւ իշխանութեան պետերուն միջեւ հանդիպումներուն ընթացքին խօսակցութիւններուն եւ քաղաքական անձնաւորութիւններու յայտարարութիւններուն:

Նախագահ զօր. էմիլ Լահուտ երէկ ընդունեց խորհրդարանի նախագահ Նեպի Պրըրի, որուն հետ քննարկեց ներքին եւ շրջանային զարգացումները, ինչպէս նաեւ երկրի տնտեսութեան վիճակը:

Պրըրի յայտարարեց, որ նախագահ Լահուտի հետ քննարկած է անհրաժեշտութիւնը թափ տալու Սպառնդներու Պաշտպանութեան վարչութեան գործունէութեան, որպէսզի անիկա կատարէ իր դերը՝ մանաւանդ յաւելնալ արժէքի տուրքի գործադրութեան եւ առեւտրական միակ ներկայացուցիչի դրուածքները:

«Առեւտրական միակ ներկայացուցիչի մենաշնորհը ջնջելու որոշում տալու պարագային, ատիկա պէտք է ըլլայ ամբողջական եւ ոչ մասնակի, եւ պէտք է կանխարգիլել նման քայլի մը ժխտական անդրադարձները, մանաւանդ դեղորայքի մարզէն ներս»,

### ՆԱԽԱՐԱՐ ՅՈՎՆԱՆԵԱՆ ԱՅՏԵԼԵՑ ԿԱՐՁԱՊԵՏ ՀԱՐԻՐԻԻ

Երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարար Սեպուհ Յովնանեան երէկ այցելեց վարչապետ Ռաֆիք Հարիրիի, ապա յայտարարեց, որ ներկայացուցած է ֆետերատիւներու եւ ակումբներու օժանդակութիւնի տրամադրե-



Նախարար Յովնանեան եւ վարչապետ Հարիրի:

լու նախարարութեան որոշումին դրոշմապատճառները:

Նախարար Յովնանեան նկատել տուաւ, որ այս օժանդակութիւնները թափ պիտի տան այդ կազմակերպութիւններու տեղական եւ արտաքին գործունէութեան, մանաւանդ որ կարգ մը ֆետերատիւներ դէմ յանդիման կը գտնուին միջազգային մակարդակի մարտահրաւերներու:

Նախարար Յովնանեան ընդգծեց այս օժանդակութիւնները կատարելու անհրաժեշտութիւնը, դիտել տալով, որ անոնք կ'ընդգրկեն լիբանանեան բոլոր շրջանները եւ դրական անդրադարձներ պիտի ունենան երիտասարդութեան եւ մարզական բնագաւառներու բարգաւաճումի երթին վրայ:

### ՄՈՍԿՈՒԱ ՄԻԱՅՆ ԻՐ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ ԿՐՆԱՅ ԲԱՆԱԿՑՈՒԹԻԻՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼ ՉԵՉԷՆՆԵՐՈՒ ՀԵՏ

Կրեմլինի Չեչենիոյ հարցերու բարձրաստիճան բանբեր Սերգէյ Շաստրովի պատճառով հակադարձելով Կրեմլինի քաղաքականութեան դէմ արեւմտեան նոր քննադատութիւններու, երեքշաբթի օր յայտնած է, թէ Մոսկուա պատրաստ է բանակցութիւններու ձեռնարկելու ըմբոստներու հետ, սակայն՝ իր սեփական պայմաններով:

Նախագահ վարտիմիր Փութինի անյապազ զօրակցութիւնը՝ Սեպտեմբեր 11ի յարձակումներէն ետք ամերիկեան գլխաւորութեամբ «հարեկցութեան դէմ պատերազմին», մղած էր Արեւմուտքը մեղմացնելու:

Շար.՝ էջ 10

ըսաւ ան:

Միւս կողմէ, երէկ երեսփոխաններու հետ իր ունեցած հանդիպումներուն ընթացքին Պրըրի յայտնեց, որ նախագահ Լահուտ, վարչապետ Ռաֆիք Հարիրի եւ ինք համախոհ են՝ շարունակելու առեւտրական մենաշնորհները ջնջելու ծրագիրը, մեկնելով այն սկզբունքէն, թէ պետութիւնը, երբ ապապետականացումով կը ջնջէ իր մենաշնորհները, պէտք է պաշտպանէ ուրիշներու մենաշնորհները:

Պրըրի ընդգծեց, որ այս սկզբունքը ընդհանուրին պէտք է գործադրուի, եւ պետութիւնը պէտք է քաշուի եւ ազատ ձգէ վառելանիւթերու շուկան, յուսալով, որ մրցակցութիւնը սակերու աննախատեսելի նուազում պատճառէ:

Պրըրի երեսփոխաններուն յայտնեց, որ վարչապետ Հարիրիէն պահանջած է դեղորայքի ներածումին վերաբերեալ որեւէ օրինագիծի մէջ նախատեսել դեղորայքի որակին հսկելու լուրջ միջոցառում, եւ վճռել դեղորայքի ազգային գրասենեակի ճակատագիրը:

«Առեւտրական մենաշնորհներուն դէմ արշաւը սկսաւ հանդուգեալ նախարարներ զօր. ժամիլ Լահուտի եւ Սայիտ Համատէի կողմէ: Նախարար էմիլ Պիթարի 1943ի հարցը յայտնի է, ինչպէս նաեւ դեղորայքի գրասենեակին հարցը, նկատի առած որ այս վարչութիւնը ցարդ չէ սկսած գործել», ըսաւ Պրըրի:

### ՀԱՐԻՐԻ ԵՒ ԴԵՂԱԳՈՐԾՆԵՐՈՒ ՄԵՆՏԻԱՆ

Վարչապետ Ռաֆիք Հարիրի երէկ ընդունեց դեղագործներու պատուիրակութիւնը, գլխաւորութեամբ Ղասսան Ամինի, որ յայտարարեց, թէ քննարկած են առողջապահութեան նախարարութեան եւ կառավա-

Շար.՝ էջ 3

#### ԲՏԱԽԱ

##### ՄԱՖԻԱՅԻ ԱՆԴԱՄՆԵՐՈՒ ՉԵՐԲԱԿԱԼՈՒԹԻՒՆ

ՀՌՈՄ, 13 (ՌՈՅԹԸՐԸ).- Իտալիոյ ոստիկանութիւնը ձերբակալեց մաֆիայի աւելի քան երեսուն անդամներ, որոնց մէջ կը գտնուին նաեւ պետական պաշտօնեաներ, որոնք պատասխանատու են երկրին մէջ փտածութեան տարածումին:


Երկու տարուան հետապնդումներէ ետք, Չորեքշաբթի օր ոստիկանութիւնը Փալերմոյի մէջ ձերբակալեց 32 անձեր, որոնք կը պատկանին «Սիւսիլիոյ մաֆիա»ի ղեկավար Պեռնարտօ Փրովենչանոյի խմբակին:

«Այս խմբակը ռճրագործներու կազմակերպութիւն մըն է, որ տարբեր ճակատներու վրայ անօրէն ձեռնարկած արագորուած աշխատանքներ կը տանի», յայտնեց ոստիկանութիւնը:

Չերբակալուածներուն մէջ կը գտնուին ականաւոր փաստաբան մը, աշխատանքի նախարարութեան քննիչներէն մէկը եւ բանտի մը տնօրէնը: Բոլորն ալ պաշտօնապէս անբաստանուած են մաֆիայի հետ գործակցութեան, պաշտօններու շարաշահումի եւ ռճրագործութեան յանցանքներով:

### ԻՍՐԱՅԷԼ «ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ԳՕՏԻՆԵՐ» ԿԸ ՍՏԵՂԾԷ ՊԱՂԵՍՏԻՆԵԱՆ ՇՐՁԱՆՆԵՐՈՒՆ ՄԷՁ

Իսրայէլեան ուժերը երէկ պաղեստինցի հինգ ոստիկաններ սպաննեցին Կալալի մէջ, ուր ներխուժած էին գիշերը «ապահովութեան գօտիներ» ստեղծելու համար պաղեստինեան շրջաններուն մէջ: Իսրայէլեան բանակը յայտնեց, որ Տէյր Պալահ, Պէյթ Հանուն եւ Պէյթ Լահիա շրջաններուն ներխուժումը մաս կը կապուի «Խալա-ահաբէկութիւն» գործողութիւններուն: Բանակը աւելցուց, որ Իսրայէլ կը հակադարձէ Համասի պիւնտալ թելին կողմէ «Քասսամ 2» հրթիռն գործածութեան:



Իսրայէլացի զինուոր մը կը հսկէ ձերբակալուած պաղեստինցիներու:

Կառավարութեան բանբերը՝ Աւի Փապաներ, վերստին դատապարտեց «Քասսամ 2»-ի արձակումը, դիտել տալով, որ անիկա վտանգաւոր իրադարձութիւն է: Փապաներ աւելցուց, որ պաղեստինցիները վրտեցին այս կրակը, կոր պիտի

մարէ Իսրայէլ՝ յարմար թեան ուժերու հրամանատար Ապտէլ Ռա-ներով: Փապաներ աւելցուց Մաժալա դատա-

Պաղեստինեան ներքին ապահովու- Շար.՝ էջ 10

### ՆԱԽԱԳԱՅ ԲՈՇԱՐԵԱՆ ԿԸ ՎԵՐԱՅԱՍՏԱՏ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂ ԵՐԲԵՔ ՄԱՍ ՊԻՏԻ ԶԿԱԶՄԷ ԱԶՐՊԷՅՃԱՆԻՆ

Հայաստանի նախագահ Ռոպէրթ Քոչարեան երէկ այցելեց Երեւանի Պետական համալսարան, ուր համալսարանի դասախօսական կազմին հետ իր հանդիպումին ընթացքին, անդրադառնալով Լեռնային Ղարաբաղի տագնապի լուծման, յայտարարեց, թէ Լեռնային Ղարաբաղ երբեք մաս չէ կազմած եւ պիտի չկազմէ Ազրպէյճանին:

Մօտ երկու ժամ տեւած հանդիպումին ընթացքին նախագահ Քոչարեան պատասխանեց ներկաներու հարցումներուն:

Պատասխանելով այն հարցումին, թէ Լեռնային Ղարաբաղի տագնապի լուծման գծով հայկական կողմի գիշու-մը ինչ տարրութիւն կրնայ ունենայ, նախագահ Քոչարեան ըսաւ, թէ Լեռնային Ղարաբաղ երբեք մաս պիտի

չկազմէ Ազրպէյճանին: Նախագահը ըսաւ, որ հասակ առած է սերունդ մը, որ Լեռնային Ղարաբաղի այլ կարգավիճակ չի պատկերացներ: «Կարելի է հաշուել չառնել այն հանգամանքը, որ մարդոց մտածելակերպին մէջ անշրջելի երեւոյթներ տեղի ունեցած են», յայտնեց նախագահ Քոչարեան:

Անդրադառնալով սահմանադրական փոփոխութիւններուն նախագահ Քոչարեան յայտնեց, որ հարցը նախընտրական պայքարի շահարկման առարկայ կը դառնայ:

Քոչարեան նաեւ անդրադարձաւ Հայաստանի տնտեսութեան, Աղէտի գօտիի վերացման, փտածութեան դէմ պայքարի, ինչպէս նաեւ կրթական, բնակարանային եւ այլ մարզերու առնչուող հարցերուն:

### «ԱԶՐՊԷՅՃԱՆ ԿԸ ՊԱՅՔԱՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՀԱԲԵԿՉՈՒԹԵԱՆ ԴԷՍ» Կ'ԸՍԷ Վ. ԿՈՒԼԻԵՒԻ

Պոլսոյ մէջ կայացող Եւրոպական Միութեան եւ Իսլամական Խորհրդաժողովի Կազմակերպութեան արտաքին գործոց նախարարներու խորհրդակցութեան ընթացքին Ազրպէյճանի արտաքին գործոց նախարար Վիլայիթ Կուլիեւ յայտարարեց, թէ «Սեպտեմբեր 11էն ետք Ազրպէյճան միացաւ աշխարհի հակահաւաքելչական արշաւին, այդպիսով դառնալով կամուրջ Արեւելի եւ Արեւմուտքի միջեւ»:

Ներկայացնելով Լեռնային Ղարաբաղի տագնապի պարզեցման համար քննարկած է, թէ «Ազրպէյճան այսօր ինք կը պայքարի հայկական ահաբեկչութեան դէմ»: Միւս կողմէ, արձագանգելով ՄԱԿի, ԵԱՀԿի եւ Եւրոպական Միութեան բարձրաստիճան ներկայացուցիչներու այն յայտարարութեան, թէ պէտք է խորացնել Հայաստանի, Վրաստանի եւ Ազրպէյճանի միջեւ տնտեսական համագործակցութիւնը, Ազրպէյճանի նախագահի աշխատակազմի արտաքին յարաբերութիւններու բաժնի ղեկավար Նովրուլ Մամետով յայտարարեց, թէ Պաքուի դիրքորոշումը կը մնայ անփոփոխ՝ Հայաստանի եւ Ազրպէյճանի համագործակցութեան փոխարէն: Նովրուլ Մամետով յայտարարեց, որ Պաքուի դիրքորոշումը կը մնայ անփոփոխ՝ Հայաստանի եւ Ազրպէյճանի համագործակցութեան փոխարէն:

Պաքուի դիրքորոշումը կը մնայ անփոփոխ՝ Հայաստանի եւ Ազրպէյճանի համագործակցութեան փոխարէն: Նովրուլ Մամետով յայտարարեց, որ Պաքուի դիրքորոշումը կը մնայ անփոփոխ՝ Հայաստանի եւ Ազրպէյճանի համագործակցութեան փոխարէն:

### ՏԱՐԱԿԱՐԾՈՒԹԵԱՆ ԴՐՍԵՒՈՐՈՒՄ

Լրատու աղբիւրներու համաձայն, Բուլղարիայի Կազմակերպութեան եւ Եւրոպական Միութեան միջեւ տարակարծութիւններ ի յայտ եկած են, ինչ կը վերաբերի ահաբեկչու-

### ԻՐԱՆ ԿԸ ՁԵՐԲԱԿԱԼԷ «ՔԱՅԻՏԱ»Ի ԶԻՆԵԱԼՆԵՐ

Իրանեան ապահովութեան ուժեր Աֆղանիստանէն խոյս տուած «Քայիտա»ի պիւնտալներ ձերբակալած են եւ անոնք կը հետապնդեն ուրիշներ, որոնք յաջողած են սահմանէն թափանցել, հաղորդած է իրանեան թերթ մը երէկ:

Իրանի խորհրդարանին ազգային ապահովութեան յանձնախումբին մէջ անդամը՝ Մոհսէն Թարքաշվան, «Նորասան» օրաթերթին յայտնած է, թէ Իրանի աշխարհագրական դիրքին պատճառով, «կրնան «Քայիտա»ի կարգ մը անդամներ կեղծ անցագիրներով եւ մուտքի արտօնագիրներով թափանցած ըլլալ սահմանէն»:

Իրան ուժգին հերքած է ամերիկեան այն ամբաստանութիւնները, թէ Իրան անցած «Քայիտա»ի անդամներու ապստան տուած է՝ անոնց թալեպան պաշտպաններուն պարտութենէն ետք:

Գաղտնի սպասարկութեան նախարար Ալի Եուլեսի անցեալ շաբաթ յայտնած էր, թէ թալեպաններու «մեծ թիւով» հետեւորդներ, որոնք

### ՓԱՌԸԼ ԿԸ ԾԳՆԻ ՆՄԵՄԱՑՆԵԼ ՌԻԱՇԻՆԿԹԸՆ - ԵՒՐՈՊԱ ՏԱՐԱԿԱՐԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Մ. Նահանգներու արտաքին գործոց նախարար Քոլին Փաուլը Երեքշաբթի օր յայտնած է, թէ Ռաշիւկթընի դաշնակիցները պէտք է յարգեն Մ. Նահանգներու «սկզբունքային ղեկավարութիւնը», նոյնիսկ եթէ անոնք միշտ ալ չեն հետեւիր անոր:

Երկու շաբթուան ընթացքին երկրորդ անգամ ըլլալով ներկայացնելով ամերիկեան տեսակետները՝ անոր դաշնակիցներուն հետ յարաբերութեանց գծով, Փաուլը նաեւ հերքած է եւրոպական այն ամբաստանութիւնները, որոնք կը վերաբերին նախագահ ձորձ Ռուշի վարչակարգին «միակողմանի» գործելաձեւին:

Պուշի Յունուար 29ին արտասանած խօսքը, որուն ընթացքին ան սպառնալիքներ ուղղած էր Իրանի, Իրաքի եւ Հիւսիսային Քորէայի դէմ, աւելի եւս մտահոգած է եւրոպացիները, ինչ կը վերաբերի ամերիկեան արտաքին քաղաքականութեան որդեգրած ուղղութեան՝ Աֆղանիստանի մէջ պիւնտալական արշաւէն ետք:

Գերմանիոյ արտաքին գործոց նախարար

Շար.՝ էջ 10

### ՆԱԽԱԳԱՀ ԼԱՀՈՒՏԻ ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Նախագահ Կոր. Էմիլ Լահուտ երկն ընդունեց ընդհանուր դատախազ Աստուհի Աստուհի, պետության անվտանգության ուժերու ընդհանուր տնօրեն Կոր. Էտուար Մասուրի եւ կրթության նախարարության նոր ընդհանուր տնօրեն Ժորժ Նասաբի այցելությունները:

Կնոջական հարցերու հետապնդման ոչ պետական յանձնարարները եւ Լիբանանի կնոջական խորհուրդի միացեալ պատուիրակութիւնը նախագահ Լահուտի ներկայացուց յուշագիր մը, որուն մէջ կը պահանջուի վերջ դնել կիններու դէմ խտրութեան եւ այրելուն հետ անհասարակութեան, թե՛ քաղաքական, թե՛ ընկերային եւ թե՛ ալ վարչական ոլորտներէն ներս:

Պատուիրակութիւնը ողջունեց պետութեան Ա. կարգի պաշտօններու համար նշանակուած կիններու թիւի աճը:

### ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՀԻԱԳՈՒՄԱՐ 5 ՄԱՐՏԻՆ

Խորհրդարանի նախագահ Նեպիհ Պրրի երեսփոխանները հրաւիրեց Երեքշաբթի, 5 Մարտին լիագումար ժողովի մը, որ պիտի յաւակցուի կառավարութեան ուղղուած լուսարանական հարցումներուն եւ հարցաքննութիւններուն:

Պրրի երկն երեսփոխաններուն հետ իր ունեցած հանդիպումին ընթացքին ներկայացուց պլոքներու ղեկավարներու հետ նախանցեալ օրուան իր ժողովին ընթացքին որոշուած ժողովավարական միջոցառումները, ընդգծելով, որ այս ժողովը կառավարութեան գործունէութեան վերահսկելու խորհրդարանի սահմանադրական պարտաւորութեան շրջագծին է, եւ այս նիստերու լրատուական հանդիպումը կենսական նշանակութիւն ունի, որովհետեւ այս ձեւով քաղաքացիներն ալ մասնակից կը դառնան այս գործընթացին:

Պետական պիտոճէին նուիրուած խորհրդարանի նիստերուն արձագանգներուն անդրադառնալով՝ Պրրի հաստատեց, որ անոնք երկնատես են, մինչ նիստի կայմակերպումն ու պլոքի անունով մէկ խօսքի դրութիւնը որդեգրելու շնորհիւ ժողովը մէկ օրէն աւելի պիտի չտեսնէ: «Նաեւ երեսփոխանները պէտք է մղել, որ իրենց արտասանած խօսքերը եւ քուէարկութիւնը իրարու համապատասխանեն», հաստատեց ան:

### «ԱԶՐՊԵՅՃԱՆ...»

Շարունակուած Ա. ԷջԸՆ  
թեան բացատրութեան: Ըստ աղբիւրներուն, երրորդական երկիրները նաեւ մերձեւ են Թուրքիան վերածել Ե. Միութեան եւ Ի. Ս. Կապակերպութեան արտաքին գործոց նախարարներու խորհրդածողովին մնայուն կեդրոնի:

### Վ.Ն.Ս.Յ. ԶԱՅՆ

Այսօր՝ Հինգշաբթի, 14 Փետրուար 2002, երեկոյեան ժամը 6:00ին կրնաք ունկնդրել մեր հարցապրոյցը՝ հայրենի սիրուած երգչուհի  
**ՇՈՒՇԱՆ ՊԵՏՐՈՍԵԱՆԻ** հետ  
●Յայտագիրին կրկնութիւնը՝ երեկոյեան ժամը 8:30ին:

### ՄԱՀԱԶԴ

Լ.ՕՆԻ «Հայաշէն» մասնաձեւի վարչութիւնը կը գումէ իր շրջանի վաստակաւոր անդամուհիներէն՝

### ՅԱՍՄԻԿ ԲԷՉԷՃԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Չորեքշաբթի, 13 Փետրուար 2002ին:

### ՄԱՀԱԶԴ

Տիար Յովհաննէս Քէչէճեան եւ զաւակները՝ Վազգէն, Սոնա եւ Մարալ  
Տէր եւ տիկին Յակոբ Քէչէճեան եւ զաւակունք  
Տէր եւ տիկին Գրիգոր Քէչէճեան եւ զաւակունք  
Տէր եւ տիկին Վարուժան Յովսէփեան եւ զաւակունք  
Տէր եւ տիկին Սարգիս Յովսէփեան եւ զաւակունք  
Տէր եւ տիկին Վարդգէս Յովսէփեան եւ զաւակունք  
Տէր եւ տիկին Վարդգէս Արսլանեան եւ զաւակունք  
Յովսէփեան ընտանիք  
Միսեան ընտանիք  
Եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց մօր, մեծ մօր, քրոջ, հօրաքրոջ, մօրաքրոջ եւ հարազատին՝

### ՅԱՍՄԻԿ ԲԷՉԷՃԵԱՆԻ

(ՕՃԵԱՂ՝ ՊԵՏՐՈՍ, 1938ԻՆ)  
մահը, որ պատահեցաւ Չորեքշաբթի, 13 Փետրուար 2002, առաւօտեան ժամը 5:30ին, իր բնակարանին մէջ, լետ կարճատեւ հիւանդութեան:  
Յուզարկաւորութեան արարողութիւնը կատարուեցաւ Չորեքշաբթի, 13 Փետրուար, կէսօրէ ետք ժամը 2:00ին, Հայաշէնի Ս. Յովհաննու - Կարապետ եկեղեցւոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը փոխադրուեցաւ Շրջն Շրջապէսի Ազգային գերեզմանատունը:  
●Ներկայս ընդունիլ իբրեւ մահապղ:  
●Յաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը Հայաշէն, Հինգշաբթի 14 եւ Ուրբաթ 15 Փետրուարին:

### ԱՌԵՏՐԱԿԱՆ ՄԻԱԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԻ...

Շարունակուած Ա. ԷջԸՆ

րուժեան ղեկորայքին վերաբերեալ միջոցառումները:

«Եթէ կառավարութիւնը համոզուած է, որ մրցակցութիւնը գինեւոր նուազում պիտի պատճառէ, ապա ղեկորայքին սեփականատէրերս դէմ չենք, պայմանաւ որ անկախ անդրադարձ չունենայ որակի վրայ», բացատրեց ան:

Ամին յայտնեց, որ Հարիբի եւ առողջապահութեան նախարարները հաստատեցին, թէ միայն նախարարութեան մօտ գրանցուած արտադրողներու ղեկոր պիտի կարենան ղեկոր գործել լիբանանեան շուկայ:

«Սենտիքային համար նախընտրելի է, որ ղեկոր մէկ սակ ունենայ, բայց այս նոր իրավիճակին մէջ նոյն ղեկոր մէկէ աւելի գիներ պիտի ունենայ միեւնոյն ղեկորայքին ներս, բայց մեք պիտի գործակցեցնենք եւ հաշտուենք այս իրավիճակին հետ, նկատի առած երկրին դժուար պայմանները», ըսաւ ան:

### ԱՅՆ ԿԵՅՈՒՄԵՆԵՐ

Կրթութեան նախարար Ապտէլ Ռահիմ Մըրատ երկն յայտնեց, որ գրեթէ ընդհանուր համախոհութիւն կայ գործադրելու առեւտրական մենաշնորհներուն վերջ դնելու որոշումը:

«Այս քայլը շատ կարեւոր է եւ հաւանաբար յաւազոյն հակակշռողն է յաւելեալ արժէքի տուրքի կիրարկումին», ըսաւ ան:

Ուժանիւթի նախարար Մուհամէտ Ապտէլ Համիտ Պաշտուն ըսաւ, որ այս քայլը կառավարութեան կարեւորագոյն միջոցառումներէն մէկն է, որուն պէտք է յաջորդէ մաքն տեսակի տնտեսական մենաշնորհի դէմ պայքարելու օրէնք մը:

«Տնտեսական մենաշնորհները անցեալին կը պատկանէին եւ Եւրոպային հետ գործընկերութեան»

թեան համաձայնութեան կարեւորագոյն սկզբունքներէն մէկը այն է, թէ մրցակցութեան դէմ փակ ոչ մէկ բնադաւառ պէտք է մնայ», ըսաւ Պաշտուն: Ան նաեւ մերժեց վաճառանիշներուն միակ ներկայացուցչին ներու հատուցումներ տալու առաջարկը:

Պետական նախարար Թալալ Արսլանի գլխաւորած Լիբանանեան Ժողովրդավարական կուսակցութեան ղեկավարութեան ժողովը հարորդագրութեամբ մը վերապահութիւն յայտնեց եւ նկատել տուաւ, որ կառավարութեան այս քայլերը կը հաստատեն տնտեսական յստակ ծրագիրի մը չգոյուլութիւնը:

«Առեւտրական մենաշնորհները ներկայացուցչու թիւններու ջնջումի օրինագիծը այսքան անակնկալ եւ արագ շրջանառութեան մէջ դնելով՝ կառավարութիւնը կը հաստատէ, թէ յստակ ծրագիր չունի, եւ կառավարութիւնը կոչուած է յստակօրէն յայտարարելու, թէ ինչ պիտի ընէ բարգաւաճումին թափ տալու եւ ապրուստի պայմանները բարելաւելու համար», ըսաւ հարորդագրութիւնը:

Երեսփոխան Մուսթաֆա Սաատ գարմանք յայտնեց առեւտրական մենաշնորհները վերջ դնելու որոշումը:

«Այս քայլը շատ կարեւոր է եւ հաւանաբար յաւազոյն հակակշռողն է յաւելեալ արժէքի տուրքի կիրարկումին», ըսաւ ան: Ուժանիւթի նախարար Մուհամէտ Ապտէլ Համիտ Պաշտուն ըսաւ, որ այս քայլը կառավարութեան կարեւորագոյն միջոցառումներէն մէկն է, որուն պէտք է յաջորդէ մաքն տեսակի տնտեսական մենաշնորհի դէմ պայքարելու օրէնք մը:

«Տնտեսական մենաշնորհները անցեալին կը պատկանէին եւ Եւրոպային հետ գործընկերութեան»

### ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Կիրակի, 17 Փետրուար 2002, երեկոյեան ժամը 6:00ին, Եռնատեսիլի Հայկական ՊատկերասփիւղԵԸ (ATN) պիտի պատկերասփռուի Ազգային Առաջնորդարանի Գաղտնիութեամբ կազմակերպուած Վարդանանց տօնակատարութիւնը, որ տեղի ունեցաւ Հինգշաբթի, 7 Փետրուար 2002ին, «Յակոբ Տըր Մելքոնեան» սրահին մէջ:

ԱԶԳԱՅԻՆ ԱՆՈՋՆՈՐԴԱՐԱՆ

### ԼՈՅՍ ՏԵՍԱԻ



«Ազգակ»ի յատուկ հրատարակութիւն: 496 էջ:  
●Ստանալու համար դիմել գրախանութներ՝ Կամազգային, Նարեկացի, Ոսկեղար, Ուրֆայեան եւ Կոմիտաս:  
ԳԻՆ՝ 15.000 լ.ո.

### ՆԱԽԱՐԱՐ ՅՈՎՆԱՆԵԱՆ...

Շարունակուած Ա. ԷջԸՆ



Արիտի եւ Ն. Ժոմպլաթ Յովհաննէանի մօտ:

Ան նշեց, որ էլեւմուտքի նախարարութիւնը ստանցուցած է այս օժանդակութիւններու յատկացումը եւ պարմանք յայտնեց այս առնչութեամբ իրեն դէմ ուղղուած մեղադրանքներուն համար:

Միւս կողմէ, նախարար Յովհաննէան ՖԻՖԱի նախագահ Ժոյէթի Պէթրի գլխաւորած պատւիրակութեան Լիբանան այցելութեան յայտագիրը, ինչպէս նաեւ ՖԻՖԱի եւ Լիբանանի ֆուտբոլի ֆետերասիոնին միջեւ գործակցութիւնը քննարկեց ֆետերասիոնի ընդհանուր քարտուղար Պահիժ Ապու Համպէի եւ անդամ Մուսթաֆա Համուսի հետ:

### ԱՐԻՏԻ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ

Նախարար Յովհաննէան երկն ընդունեց այցելութիւնը տեղեկատուութեան նախարար Ղալի Արիտիի եւ Պէյթեստիի փաստաօճերու յանձնարարին նախագահ Նուրա Ժոմպլաթի:  
Հանդիպումին քննարկուեցաւ նախարարութեան եւ ոչ պետական մարմիններուն միջեւ համակարգումը, երիտասարդական եւ բարգաւաճման ձեռնարկներու թափ տալու նպատակով:

### ՊԱՂԵՍԻՆԵԱՆ ՀԱՐՅԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Լիբանանեան եւ պաղեստինեան կուսակցութիւններու խորհրդածողովի որոշումներու հետապնդման յանձնարարութեամբ երկն ժողով մը գումարեց Փաղեստինի վաստակաւոր Սէյֆի կեդրոնատեղիին մէջ: Ներկայ էր նաեւ Հ. Յ. Պաշտակցութեան ներկայացուցիչը:

Ժողովին քննարկուեցաւ պաղեստինեան շրջաններու վիճակի վատթարացումը, պաղեստինցի գաղթականներու տուճարաճի իրաւունքն ու անոնց բնակեցումին մեթոտը, ինչպէս նաեւ ինքիֆատային հետ պօրակցութեան խորհրդածողովի նախապատրաստութիւնները:

### ՄԱՀԱԶԴ

Տիար Բարսեղ Միսլեան  
Տէր եւ տիկին Գէորգ Գազանճեան եւ ընտանիք  
Տէր եւ տիկին Պետրոս Միսիթարեան եւ ընտանիք  
Տէր եւ տիկին Նազարէթ Սամուէլեան եւ ընտանիք  
Տէր եւ տիկին Վարդան Միսլեան եւ ընտանիք  
Օհանեան ընտանիք  
Ճղալեան ընտանիք  
Մարգրիտեան ընտանիք  
Նարեկեան ընտանիք  
Միսլեան ընտանիք  
Եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց մօր, մեծ մօր, քրոջ եւ հարազատին՝

### ԿԻԼԻԻԶԱՐ ՍԻՍԵԱՆԻ

(ՕՃԵԱՂ՝ 1934ԻՆ)  
մահը, որ պատահեցաւ Չորեքշաբթի, 13 Փետրուար 2002ին, սրտի տագնապի պատճառով:  
Յուզարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ Հինգշաբթի, 14 Փետրուար, կէսօրէ ետք ժամը 2:00ին, Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատան մատրան մէջ:  
●Ներկայս ընդունիլ իբրեւ մահապղ:  
●Յաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը, Անթիլիաս, «Շիրապ» շէնք, Հինգշաբթի 14, Ուրբաթ 15 եւ Շաբաթ 16 Փետրուարին:

### ՄԱՀԱԶԴ

Տէր եւ տիկին Յակոբ Թաշճեան եւ զաւակունք  
Տէր եւ տիկին Վարդիվառ Յովհաննէսեան եւ զաւակունք  
Թաշճեան ընտանիք  
Յովհաննէսեան ընտանիք  
Կորկոտեան ընտանիք  
Եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց քրոջ եւ հարազատին՝

### ԱՐՄԻԼԵ ԹԱՇՃԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Երեքշաբթի, 12 Փետրուար 2002ին, Փարիզի մէջ, Ֆրանսա:  
Յուզարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի Ուրբաթ, 15 Փետրուար, կէսօրէ ետք ժամը 3:00ին, Փարիզի Հայ Առաքելական եկեղեցւոյ մէջ:  
●Ներկայս ընդունիլ իբրեւ մահապղ:  
●Յաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին եղբոր՝ Յակոբ Թաշճեանի բնակարանը, Անթիլիաս, «Սիմիթեան» շէնք, Շաբաթ 16 Փետրուարին:

STUDIO  
**Lantern**  
●Կը ստանձնէ ուրախ առիթներու video  
Գկարահանումներ  
ԸՆՈ. 01-268866  
Եւ 03-695399

### ՄԻԼՈՇԵՒԻՉ Կ'ԱՍՏՐԱՍԱՆԷ ԶԻՆՔ ԱՍՏՐԱՍԱՆՈՂ ԱՏԵԱՆԸ

Սլոպոտան Միլոշեւիչ երեկ պիտի պատերազմի ուժերը գործած ըլլալու յանցանքով ամբաստանող դատախազները ամբաստանած է պիտի «առանց օրինական դատավարութեան ամբողջ դատաստան»ի ենթարկելու յանցանքով:

Լսելէ ետք երկօրեայ ամբաստանութիւնները, թէ ինք եղած է ուղեղը ջարդերու, հալածանքներու եւ հաւաքական տեղահանումներու, իր դատավարութեան ընթացքին առաջին անգամ արտայայտուելով, Եուկոսլաւիոյ նախկին ղեկավարը դատապարտած է Լա Հէյի ատենաին հանգամանքը: Ատենանը հաստատուած է միմիայն դատարանի հետապնդումներու ենթարկելու համար նախկին Եուկոսլաւիոյ տագնապներուն ընթացքին պատերազմի ուժերու ամբաստանեալներ:

Դատախազները 9 ժամ տեւողութեամբ ներկայացուցած էին Միլոշեւիչի դէմ ուղղուած ամբաստանութիւնները: Այս, ատենաին նախագահող դատաւորը՝ Ռիչըրտ Մէյ, հրաւիրած է Միլոշեւիչը սկսելու իր պատասխանը երէկուան նիստին վերջին կէս ժամուան ընթացքին կամ մինչեւ Հինգշաբթի օր (այսօր) սպասելու:

«Այս ատենանը իրաւունք չունի պիտի դատելու, որովհետեւ օրինական ձեւով չէ հաստատուած», պատասխանած է ան:

Միլոշեւիչ շեշտած է, թէ կարելի չէ արդար դատավարութեան մը մասին խօսիլ: «Դատախազը ի՞նչ միայն կողմնորոշուած է, այլ ան արդէն ի՞նչ հրապարակած է իմ դէմ ուղղուելիք վճիռը», ըսած է ան:

Միլոշեւիչի իրական հարցերու խորհրդատուները գանգատած են, թէ դատախազները հրապարակաւ յայտնած են, որ ան արժանի է ցկեպան բանտարկութեան:

Դատավարութիւնը յետագուած է մինչեւ այսօր առաւօտ, երբ կը նախատեսուի, որ Միլո-

Շարք՝ էջ 10

### ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ ԴԵՍՊԱՆԻՆ ԹԵՂՐԱՆԻ ԿՈՂՄԷ ՍԵՐԺՈՒՄԻՆ ՊԱՏԵՍՈՒՄ

#### ԻՐԱՆ - Ե. ՄԻՈՒԹԻՆ ԶԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿՐՆԱՆ ՎԱՏՔԱՐԱՆԱԼ

ԹԵՂՐԱՆ, 13 (ՌՈՅԹԸՐԸ).- Իրանի խորհրդարանի բարեկարգչական ճակատի երեսփոխաններ մտաւոգ են, որ Բրիտանիոյ առաջարկած դեսպանին մերժումը պիտի խանգարէ Երոսլական Միութեան հետ կապերու բարելաման ընթացքը:

Խորհրդարանին արտաքին հարցերու եւ ազգային անվտանգութեան յանձնախումբերը հանդիպումներ ունեցան արտաքին գործոց եւ գաղտնի սպասարկութեանց նախարարներու հետ՝ փոխանցելու համար իրենց մտաւոգութիւնը, յայտնեց երեսփոխան Ալի Թաճերնիս: Ան աւելցուց, որ արտաքին քաղաքականութեան մէջ ռազմագիտական կարեւորութիւն կը ներկայացնեն Երոսլական Միութեան հետ կապերը: Թաճերնիս դիտել տուաւ, որ Իրան պէտք է խուսափի այդ կապերը վտանգող արարքներէ ու որոշումներէ:

Բրիտանիա անցեալ շաբաթ յայտարարած է, որ Տէյվիտ Ռեյտուելի նշանակման մերժումը Թեհրանի կառավարութեան կողմէ բարդացուց կապերը երկու երկիրներուն միջեւ: Բրիտանիա ըսած էր նաեւ, որ այլ թեկնածու մը պիտի չառաջարկէ:

Բարեկարգչական ճակատի երեսփոխանները կ'ըսեն, որ վեճին պատճառը «համակարգումի պակաս» է իրանեան պետական հաստատութիւններուն միջեւ, ինչպէս նաեւ լրատուական ցանցերուն կողմէ, հարցին չափապանցուած կերպով ներկայացումը:

Իրանեան պահպանողական մամուլը հաղորդած էր, որ Ռեյտուելի իրեայ է եւ կապեր ունի Բրիտանիոյ գաղտնի սպասարկութիւններուն հետ:

### ՌՈՒՍԻՈՅ ՌԻՂԱՓՈՒ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԵՒ ՎԱՏԻԿԱՆԻ ԶԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ՝ ԴԵՊԻ ՎԱՏՔԱՐԱՑՈՒՄ

ՄՈՍԿՈՒՄ, 13 (ՌՈՅԹԸՐԸ).- Ռուսիոյ Ուղղափառ Եկեղեցւոյ եւ Վատիկանի միջեւ ծայր տուած բանավեճ մը աւելի եւս սրած է Չորեքշաբթի օր, երբ Ռուսիոյ Եկեղեցին որոշած է կաթողիկէ բարձրատիկան կարտինայ մը ընդունելու ծրագիրը ջնջել:

Ռուսիոյ Ուղղափառ Եկեղեցին Երեքշաբթի օր պայրոթով դատապարտած է Վատիկանը, ըսելով, որ Ռուսիոյ մէջ կաթողիկէ թեմեր ստեղծելու անոր քայլին նպատակն է կերտել կառոյց մը՝ ուղղափառ հաւատացեալներէն կրօնափոխ անձեր ձեռք ձգելու համար:

Բանավեճը ծայր տուած էր Երկուշաբթի օր, երբ Վատիկան Ռուսիոյ մէջ կաթողիկէ չորս թեմեր ստեղծած էր, երկրին կաթողիկէ փոքր համայնքին համար իր կրօնական ներկայութիւնը ամրապնդելու նպատակով:

Ռուսիոյ արտաքին գործոց նախարարութիւնը յայտնած է, թէ վզուցուցած է Վատիկանը, թէ թեմեր ստեղծելու իր քայլը հաւանաբար ուղղափառ Եկեղեցւոյ հետ յարաբերութիւնները աւելի եւս պիտի վատթարացնէ, եւ թէ ան կոչ ուղղած է ուշացնելու իր որոշումը:

### ՊՈՒՇ ՈՐՈՇԱԾ Է ՏԱՊԱԼԵԼ ՍԱՏՏԱՄ ԸԻՄԵՅՆԸ



ՃԷՄ ԵՒ ՍԱԿՐԻ ԳԱՆԴԻՊՈՒՄԻՆ ԸՆԹՅՈՒՆՆԵՐ:

Միացեալ Նահանգներու նախագահ Ճորձ Պուշ որոշած է տապալել Սատամ Հիւսէյնը եւ Մի. Այ. Էյ. Ին ու Փենթագոնին հրահանգած է այս ուղղութեամբ ծրագիրներ մշակելու, հաղորդեց «Ֆիլատելֆիա Ինքուայրը»:

Օրաթերթը յայտնեց, որ պիտուորական գործողութեան մը հաւանականութիւնը տակաւին հաստատ չէ, բայցեւայնպէս բարձրաստիճան պաշտօնատարներու համաձայն, Պուշ որոշած է տապալել Սատամը, որովհետեւ Իրաքի կո-

րիպային, քիմիական ու կենսաբանական պէնքերու ծրագիրները մեծ սպառնալիք մը կը նկատուին Միացեալ Նահանգներու

ազգային ապահովութեան դէմ: Օրաթերթին համաձայն, Պուշ վերջնականօրէն որոշած է իշխանութենէ հեռացնել Սատամը, նոյնիսկ եթէ Ուաշինկթընի դաշնակիցները համաձայն չգտնուին ու չօժանդակեն ծրագիրին իրագործման:

Ռուսիա եւ Ուաշինկթընի երոսպացի դաշնակիցները մտահոգ են ամերիկեան հռետորական ոճով, որ քանի մը շաբաթէ ի վեր սպառնալիքներ կ'ուղղէ Իրաքի դէմ: «Ինքուայրը» հաղորդեց նաեւ, որ վերջերս Մի. Այ. Էյ. Սատամի կեդրոնական իշխանութիւնը անկաշուն դարձնելու ծրագիր մը մշակած ու ներկայացուցած է Պուշի, որ խանդավառուած է, սակայն յստակ չէ եթէ կանաչ լոյս տուած է անոր:

ՍԱՊՐԻ - ՃԷՄ ՏԵՍԱԿՑՈՒԹԻՆ

Իրաքի արտաքին գործոց նախարար Նաժի Սապրի երէկ Պոլսոյ մէջ հանդիպում ունեցաւ թուրք պաշտօնակիցին՝ Իսմայիլ Ճէմի հետ: Տեսակցութենէն ետք երկու պաշտօնատարները չըսին ինչպիսի հարցեր արժանաւորուած են եւ եթէ անոնց մէջ կ'իյ-

Շարք՝ էջ 10

### ՍՈՒՏԱՆԻ ՄԵՐ ԳԻՒՂԱՔԱՂԱՔԻ ՄԸ ՈՍԲԱԿՈՑՄԱՆ ՊԱՏԵՍՈՒՄ

#### ՈՒԱՑԻՆԿԹԸՆ՝ ԶԱՅՐԱՑԱԾ

Միացեալ Նահանգներ պայրոթ յայտնեցին սուտանական օդուծին կողմէ գիւղաքաղաքի մը վրայ կատարուած յարձակումին վերաբերեալ:

«Այս անիմաստ յարձակումը կը փաստէ, որ մարդաիրական գործունէութիւնը եւ քաղաքայինները տակաւին կը մնան թիրախներ ծրագրուած եւ շարունակուող յարձակումներու», նշեց Մ. Նահանգներու արտաքին գործոց նախարարութեան հրապարակած մէկ հաղորդագրութիւնը:

Սնունդի Համաշխարհային Ծրագիրին տեղեկութիւններուն համաձայն, յարձակումը տեղի ունեցած է Պահրէյ Դապայի հարաւային նահանգներէն մէկուն մէջ, ուր կառավարութիւնը դիմադրութեան մէջ է ըմբոստ ուժերու հետ:

Յարձակումին կողմէ գացին երկու երեխաներ եւ վիրատուեցան տասնեակ մը ուրիշներ: «Մ. Նահանգներ պայրացած են, որովհետեւ այս յարձակումը կը հակասէ Խարթումի կոչը

Շարք՝ էջ 10

### ԿԱՐՃ ԼՈՒՐԵՐ

●ՔՈՒԷՅԹ.- Քուէյթի պետական «Շուայա» փերթօքսիական պտարանին մէջ երկու օտար պաշտօնեաներ՝ հնդկ մը եւ թուրք մը, կոհ գացին արկածի մը, յայտնեց քուէյթեան մամուլը, Չորեքշաբթի օր:

Արկածին մասին ստոյգ տեղեկութիւններ չկան տակաւին:

●ՄԱՆԱՄԱ.- Պահրէյնի օդակայանին մէջ մուկապիքցի մը ձեռքարկուեցաւ եւ ատենաին մը կողմէ դատապարտուեցաւ 10 տարուան բանտարկութեան, դէպի Օոցի երկիրներ թմրեցուցիչ մաքսանեւգութիւն կատարած ըլլալու յանցանքով:

●ԼՈՆՏՈՆ.- Բրիտանիոյ մէկ դար եւ մէկ տարեկան (101ամեայ) թագուհին սայթաքեցաւ եւ թեղ կտորեց Սանտրինկիմ թագաւորական պալատին մէջ: Այսօր ան ներկայ պիտի գտնուի անցեալ շաբաթավերջին մահացած Մարկարէթ իշխանուհիին (իր աղջկան) յուղարկարարութեան, որ տեղի պիտի ունենայ Ուինստըրի մէջ:

●ՏՈՒՊԱՅ.- Մեկուսական Արաբիոյ մէջ տարեկան իլլամական ուխտագնացութեան՝ հաժին մասնակցելու նպատակով եկած քառասուն ուխտաւորներ, որոնց մեծ մասը փաքիստանցիներ, կոհ գացին ինքնաշարժի արկածի մը:

●ԹԵՂՐԱՆ.- Թեհրանի մէջ իրանցի պատանիներ մեծ խանդավառութեամբ սուեցին Վերջին շաբաթը:

Իրանի մէջ ընդհանրապէս երիտասարդներ երեք վարդեր կը գնեն, որոնցմէ իւրաքանչիւրը կը խորհրդանշէ անգլերէնով «Այ լավ ետ» բառերը:

### ԱՂԱՍԱՐԳԻՍԵԱՆ ՀԱՍ.

- ◆SONY
- ◆TOSHIBA
- ◆PANASONIC
- ◆SHARP
- ◆PHILIPS
- ◆SAMSUNG
- ◆PIONEER
- ◆MEC
- ◆GENERAL ELECTRIC
- ◆WHITE WESTINGHOUSE
- ◆KELVINATOR
- ◆HOOVER
- ◆BOSCH
- ◆MOULINEX
- ◆BRAUN
- ◆MIELE

### ՎՃԱՐՄԱՆ ԳԻՒՐՈՒԹԻՒՆՆԵՐ 36 ԱՄՍՈՒԱՆ ՎՐԱՅ LISTE DE MARIAGE

Պուրճ Համուտ - Քաղաքապետարանի հրապարակ, ՀԵՌԱՉԱՅՆՆ՝ 01-241000  
Չոր մուտք, Սանքըր Պանքոյէ: Կառատուը ապահովուած:

### ՔԱՇՄԻՐԻ ՄԷՋ՝ ԲԱԽՈՒՄՆԵՐ

ՄՐԻՆԱԿԱՐ, 13 (ՌՈՅԹԸՐԸ).- Հնդկաստանի եւ Փաքիստանի միջեւ գտնուող Քաշմիրի տագնապայի շրջանին մէջ հնդկական ապահովական ուժերուն եւ ըմբոստ ծայրայեղականներու միջեւ բախումները պատճառեցին 12 կոհ, յայտնեց ռուսիկանութիւնը, Չորեքշաբթի օր:

Պարամուլլայի մէջ, հիւսիսային Սրինակար, հնդկական ապահովական ուժերու կողմէ սպանուեցան չորս ծայրայեղականներ, որոնք կը պատկանէին Փաքիստանի համակիր «Ալ Ֆաթի» խմբակին:

Ռուսիկանութիւնը յայտնեց, որ անջատողական երեք ըմբոստներ եւ երեք ռուսիկաններ սպանուած են չորս ժամ տեւած արհիւայի բախումներուն, հիւսիսային Ճամուի մէջ:

Ճամուի արեւելեան շրջանին մէջ նաեւ երկու ծայրայեղականներ սպանուեցան հնդկական ապահովական ուժերու կողմէ:

Պարամուլլայի մէջ նախանցեալ գիշեր երեք հապար ցուցարարներ հաւաքուեցան բողոքելու համար ռուսիկաններու կողմէ քաղաքայիններու սպանութեան դէմ, յայտնեցին ակախատեաներ:

### ԹՈՒՐԲԻԱ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ ՄԸ ԱՆՊԱՐՏ ԿԸ ՀՌԶԱԿՈՒԻ

ՊՈԼԻՍ, 13 (ՌՈՅԹԸՐԸ).- Պոլսոյ մէկ ատենանը Չորեքշաբթի օր անպարտ հոշակած է հրատարակիչ մը, որ ամբաստանուած էր թուրք պետութեան միասնականութեան վտանգ սպառնացած ըլլալու յանցանքով՝ հրատարակելով ամերիկացի ակադեմիական Նոամ Չոմսքիի քաղաքական յօդուածներու մէկ հիւրը՝ թրքերէն:

Պետական ապահովութեան ատենաին մէկ դատաւորը, «Արամ» հրատարակչատան հրապարակիչ Ֆաթիի Թաշի դէմ (22 տարեկան) ամբաստանութիւններ չեղեալ նկատած է, դատախաչութեան դիրքորոշումին փոփոխութենէն ետք եւ յայտնած է, թէ հիւրը թրքական պետութեան միասնականութեան դէմ քարոզչութիւն չէ:

Շարք՝ էջ 10

### ԽԱՐԱԶԻ ՊԱՆԿԼԱՏԷՇ Կ'ԱՅՅԵԼԷ

ՏԱՔԱ, 13 (ՌՈՅԹԸՐԸ).- Իրանի արտաքին գործոց նախարար Քամալ Խարապի այսօր երկօրեայ պաշտօնական այցելութեամբ մը կը հասնի Պանկլատէջ: Այցելութեան ընթացքին պիտի քննարկուին առեւտրական հարցեր եւ շրջանային իրադարձութիւններ, յայտնեցին պետական պաշտօնատարներ:

«Երկու երկիրներուն առնչուող եւ առեւտրի հետ կապ ունեցող հարցերը պիտի ըլլան Խարապիի եւ իր պաշտօնակիցին՝ Մորշէտ Խանի քննարկելիք հիմնական նիւթերը», ըսաւ արտաքին գործոց նախարարութեան մէկ պաշտօնատարը:

Նախարարներ Խարապիի եւ Խանի հանդիպումին քննարկումի առարկայ պիտի դառնան նաեւ շրջանային հարցեր, ներառեալ՝ Աֆղանիստանի եւ Թեհրանի յարաբերութիւններու բնոյթը Ուաշինկթընի հետ:

Նախարարութեան այլ պաշտօնատարներ ընդգծեցին, որ Խարապի հանդիպումներ պիտի ունենայ նաեւ վարչապետ Պէկում Խապէտա Չիաշի եւ խորհրդարանի նախագահ Ժամիլուտտին Ալիբարի հետ:

Խարապի Պանկլատէջ կը հասնի քսան առեւտրականներէ բաղկացած պատուիրակութեան մը ընկերակցութեամբ:

### ԳՈՐԾԱԾԵՅԷՔ FUEL CARDԸ ՏԵՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ԶԱՉՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ



#### FUEL CARDԸ ԿՐՆԱՔ ՕԳՏԱԳՈՐԾԵԼ ԸՆԹԵՒԵԼ ԿԱՅԱՐԱՆՆԵՐՈՒՆ ՄԷՋ

1. CORAL JAL EL DIB, ժել էլ Տիպ
2. HYPCO ANELIAS, Կարաք Ալ Դաուարնէ
3. SPEED ANELIAS, Կաթողիկոսարանի դիմաց
4. CORAL BAABDAT, Պապատեք մայրուղի
5. SPEED ACHRAFIEH, էլ Նահր PEUGEOT ընկ. առաջ
6. HYPCO HAMRA, Պանք Տի Լիպաննէ առաջ
7. MEDCO KARANTINA, Զարանքնայի մայրուղի
8. CORAL BHAMDOUN, Դամակոսի մայրուղի
9. CORAL MAR MIKHAEL, Մար Միխայել, Սաաու պողոտայ
10. SPEED ALITTIHAD, Կալերի Իթթիհատ
11. MANAR FANAR, Ֆանար, Նաաուր պանդոկից կից
12. CALTEX ANJAR, Այնճար
13. BASSIL DORA, Տորայի կամուրջ
14. ԱՅԿԱՎԱՆ ԿԱՅԱՐԱՆ, Տորա, «Այմազ»-ի կից
15. ԱՍՐԳԻՍԵԱՆ ԿԱՅԱՐԱՆ, Պուրճ Համուտ, Սիք էլ Ֆիլի մայր պողոտայ

Յաւելեալ մանրամասնութեանց համար հեռաձայնել՝ 01-242556 թիւին:

Մագուրի սպասարկութեան համար հեռաձայնել՝ 04-715111, 04-715222 եւ 04-715333 թիւերուն:

ԱՐԺԷՔՒՈՐ ՆՈՒԷՐՆԵՐ ԵՒ ԻՆՔՆՍՏՐՈՒԹ ՄԸ

ԵՍՐՏԸ ԿԸ ՍՍԱՆՔ ԶՐԻՕՐԵՆ

### Հ. Յ. Դ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՐԱԳՈՅՆ ՄԱՐԺԻՆԻ ԲԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ

Ուրբաթ, 8 Փետրուարին, հանդիպում մը տեղի ունեցաւ Հ. Յ. Դ. Հայաստանի Գերագոյն Մարմինի եւ Հայաստանի Հանրապետական կուսակցութեան (ՀՀԿ) ներկայացուցիչներուն միջեւ: ՀՀԿի կողմէ հանդիպումին մասնակցեցան Հայաստանի վարչապետ Անդրանիկ Մարգարեան, Ազգային ժողովի փոխ նախագահ եւ ՀՀԿ խորհուրդի փոխ նախագահ Տիգրան Թորոսեան, Նորհուրդի փոխ նախագահ Ռազմիկ Զօհրապեան, անդամներ Գալուստ Սահակեան եւ Գագիկ Մինասեան, իսկ Հ. Յ. Դ. Հայաստանի Գերագոյն Մարմինին կողմէ՝ ներկայացուցիչ Արմէն Ռուստամեան, անդամներ՝ Աղուան Վարդանեան, Միքայէլ Մանուկեան եւ Գեղամ Մանուկեան:

Քննարկուեցան Հայաստանի ներքին եւ արտաքին քաղաքականութիւնը յուզող հարցեր: Մանրամասն անդրադարձ եղաւ օրէնսդրական մարզին մէջ գործակցութեան՝ ի մասնաւորի սահմանադրութեան փոփոխութիւններու նախագիծի, կուսակցութիւններու մասին օրէնքի, ընտրական օրէնագիրքի փոփոխութիւններու վերաբերեալ: Արձանագրուեցաւ, որ քննարկուած հարցերու գծով երկու կուսակցութիւններու տեսակէտները համահունչ են:

### ՀԱՆԴԻՊՈՒՄ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՊԱՏՈՒԹՅԱՆՍՈՒԹԵԱՆ ՄԸ ՀԵՏ

Հ. Յ. Դ. Հայաստանի Գերագոյն Մարմինի լրատուական բաժանմունքը կը հաղորդէ, որ 11 Փետրուարին Երեւանի Հ. Յ. Դ. «Միմոն Վրացեան» կեդրոնին մէջ Հ. Յ. Դ. Հայաստանի Գերագոյն Մարմինի ներկայացուցիչ Արմէն Ռուստամեան, Գերագոյն Մարմինի անդամ Միքայէլ Մանուկեան եւ Երիւրի փոխ մարզպետ Ռոմիկ Մանուկեան հանդիպում մը ունեցած են պաշտօնական այցելութեամբ Երեւան գտնուող եւրոպական խորհուրդի պատգամաւոր Մարի - Արլէթ Բարլոթի, Մարտէյի քաղաքային խորհուրդի փոխ նախագահ Քրիսթֆ Մասսի եւ անոնց ուղեկցող պատուիրակութեան մը հետ:

Հիւրերուն խնդրանքով Արմէն Ռուստամեան ներկայացուցած է Հայաստանի մէջ Հ. Յ. Դ. Դաշնակցութեան գործունէութիւնը եւ մանրամասնօրէն անդրադարձած է Հայաստանի քաղաքական եւ տնտեսական խնդիրներուն շուրջ Հ. Յ. Դ. ի մօտեցումներուն եւ տեսակէտներուն:

### «ԱՄԵՐԻԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՐԱՐԵՆՈՒ» ԱՄԲԱՍԱԿԱՆՈՒԹԵԱՄ՝ ՊԱՏԿԵՐԱՍՓԻՒՌԻ ԿԱՅԱՆ ՄԸ ՄԷԿ ՏԱՐԻՈՎ ԿԸ ՓԱԿՈՒԻ

Հակառակ այն իրողութեան, որ Թուրքիոյ խորհրդարանը անցեալ Հոկտեմբերին երկրի սահմանադրութիւնը «բարեփոխութեան» ենթարկեց՝ արտօնելու համար քրտերէնով պատկերասփիւռային եւ ձայնասփիւռային հաղորդումները, երկրին հաղորդումներուն հսկող պետական մարմինը Երկուշաբթի, 11 Փետրուարին որոշեց մէկ տարիով փակել քրտարնակ շրջաններու մէջ սփռուող «Կիւն Թի.Վի.» պատկերասփիւռային կայանին հաղորդումները, հոնկէ հաղորդուած քրտերէնով «գաղափարական» երգերը «վայրագութիւն, անբեկչութիւն եւ ցեղային անշտողականութիւն հրահրող» համարելով:

Յատկանշական է, որ այս քայլը կ'առնուի այն միջոցին, երբ Թուրք ղեկավարները կը պնդեն, թէ աշխատանք կը տանին երկրին մարդկային իրաւանց վիճակը բարելաւելու համար, որպէսզի Եւրոպական Միութեան անդամակցութեան գործընթացը արագանայ:

«Կիւն Թի.Վի.» կայանին սեփականատէր Նեւզաթ Պիլիկէօլ դատապարտեց այս որոշումը՝ գայն «զուտ քաղաքական եւ միակողմանի» որակելով:

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԷ ԵՒ ԵԼԵԿՏՐՈՆԻԿԱԿԱՆ ԿՐԱՍՏԱՆԻ

«Արքա» լրատու գործակալութիւնը կը յայտնէ, թէ «Արմուսկազ քրոմ» ընկերութիւնը պիտի շարունակէ վրաստանի հայթայթել օրական 120 մեկուսացուցիչներու արտադրութիւնը: Ընկերութիւնը ելեկտրական սարքավորումներու հայթայթման ժամկէտը 31 Յունուարէն երկարաձգած է մինչեւ 20 Փետրուար:

Նշենք, որ վրաստանի Հայաստանէն յաւելեալ ելեկտրականութիւն սկսաւ գնել Դեկտեմբերի վերջերը, երբ անոր «Կարտայան» ելեկտրականային մէջ պայթումի մը պատճառով խանգարուած տեղի ունեցաւ:

### ԱՉՐՊԵՅՃԱՆ ՄԻՆՍՔԻ ԽՄԲԱԿԵՆ ՆՈՐ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ ԿԸ ՅՈՒՍԱՅ

«Արմինֆօ» լրատու գործակալութիւնը կը յայտնէ, թէ Ազրպէյճանի արտաքին գործոց նախարար Վիլայէթ Կուլեյի համաձայն, կը նախատեսուի, որ ԵԱՀԿի Մինսքի խմբակի համախաղաղութեան խնդիրները իրենց յառաջիկայ շրջան այցելութեան ընթացքին Լեռնային Ղարաբաղի տագնապին լուծման համար կատարեն նոր առաջարկներ: Ան նշած է, թէ 24 Մարտին պիտի լրանայ Լեռնային Ղարաբաղի տագնապին լուծման մէջ միջնորդներուն դերակատարութեան տասնամեակը: «Դժբախտաբար, այս ժամանակամիջոցին անոնք չկրցան որեւէ յատկանշական յառաջընթաց արձանագրել այս հարցին լուծման առնչութեամբ: Ազրպէյճան կը յուսայ, որ այս ուղղութեամբ անոնք աւելի յոյսեր քայլեր որդեգրեն», ըսած է Վ. Կուլեյի:

Կը նախատեսուի, որ Մինսքի խմբակի համախաղաղութեան շրջան այցելու Փետրուարի վերջը կամ Մարտի սկիզբը: Անոնք պիտի այցելեն Լեռնային Ղարաբաղ, Հայաստան եւ Ազրպէյճան եւ հսկողութիւն պիտի կատարեն ռազմաճակատին վրայ:

### ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ՄԵՉ



Երէկ, Չորեքշաբթի, 13 Փետրուարի յետմիջօրէին, թեմի բոլոր եկեղեցիներուն մէջ կրօնական հանդիսաւոր արարողութիւններով նշուեցաւ Տեառնընդառաջի նախատոնակը, որուն աւարտին խորաններուն վրայ կատարուեցաւ մանուկներու եւ նորածիններու ընծայարարութիւնը:

Անթիլիասի Մայր տաճարին մէջ կատարուած արարողութեան հանդիսակցեցաւ եւ իր պատգամը փոխանցեց Արամ Ա. կաթողիկոս, որ գնահատեց Հայ ընտանիքներուն մէջ եկեղեցական աւանդութիւններու նկատմամբ զիտակից մօտեցումը:

Նոր Մարաշի Ս. Բառասնիք Մանկանց եկեղեցոյ մէջ Լիբանանի հայոց թեմի առաջնորդ Գեղամ եպ. Խաչերեան իր փոխանցած պատգամին մէջ ըսաւ, թէ կրակ վառելու աւանդական սովորութիւնը պահուած է հայ եկեղեցոյ կողմէ, որովհետեւ կրակը լուսաւորութեան խորհրդանշան է:

Կրօնական արարողութիւններու աւարտին, քահանայ հայրերը խորանի կանթեղներէն քոջավառեցին եկեղեցիներու շրջափակներուն աւանդական խաւովները, որոնց շուրջ թափօր կազմելէ ետք՝ ներկայ հաւատացեալները իրենց ժողովուն ու լապտերները վառելով, ճրագը տարին ժողովուն, գանձը լուսաւորելու եւ պայծառացնելու համար՝ օրուան խորհուրդով:

### ԱՉՆԱՌՈՒՐԻ ՎԵՐՉԻՆ ՇՐՋԱՊՏՈՒՅՏԸ՝ ՔԱՆԱՏԱՅԻ ՄԵՉ

Աշխարհահռչակ երգիչ Ծարլ Ազնաւուր մեկնած է Քանատա, ուր Ապրիլի մասուան ընթացքին Երոյթներ պիտի ունենայ Մոնրէայի, Թորոնթոյի, Քեպէքի եւ Օթտաւայի մէջ: Նշենք, որ Քեպէքի մէջ տեղի ունենալիք համերգը նշանակուած է 24 Ապրիլի օրը: Կը նախատեսուի, որ այդ համերգին ընթացքին նկարահանուեն կատարուին Ատոմ Էլոյեանի «Արքատ» ժապաւէնին համար, որուն մէջ նաեւ դեր ստանձնած է Ծարլ Ազնաւուր:

77 տարեկան երգիչը յայտարարած է, որ Քանատայի շրջապատում պիտի ըլլայ իր վերջին ելոյթը: Ան ըսած է. «Շուտով 80 տարեկան պիտի ըլլամ եւ ժամանակն է հանգիստի մասին մտածելու»: Ըստ քանատական թերթերու, յառաջիկայ շրջապատումն է ետք Ազնաւուր իր ժամանակը կը նուիրէ իր կողմէ Հայաստանի մէջ հիմնուած դպրոցներուն եւ որբանոցներուն:

Միւս կողմէ, Փրանսական «Լը Ֆիլար» թերթը կը տեղեկացնէ, թէ Ծ. Ազնաւուր հրատարակութեան կը պատրաստէ իր յուշերը, եւ արդէն աւարտած է աշխատանքին երեք քառորդ մասը:

Թէեւ գայթակղել կրնաք չեմ ունեցած, սակայն կեանքիս բոլոր երեւոյթներուն պէտք է անդրադառնամ. այնպէս որ, Ազնաւուր պիտի ներկայացուի ամբողջութեամբ», ըսած է ան:

### «ԱՐՄԵՆԹԵԼ»Ի ԽԱՆՏՈՒՄՆԵՐՈՒՆ ԴԵՄ

### Դ. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ ԿԸ ԴԻՄԷ ԳԼԽԱՒՈՐ ԴԱՏԱԽԱՋԻՆ

Հայաստանի արդարադատութեան նախարար Դաւիթ Յարութիւնեան դիմած է Հայաստանի գլխաւոր դատախազին՝ Արմէն Երիցի ընկերութեան կողմէ վերջերս ստորագրուած սակագիններու պայմանագիրին խախտման առնչութեամբ:

Ըստ իրեալ պայմանագիրին, հեռաձայնային ներքին խօսակցութիւններու համար վճարումի գումարին մէջ թէ՛ քաղաքացիներուն եւ թէ՛ իրաւաբանական անձերուն պարագային կը մտնէ յաւելեալ արժէքի տուրքը (ՅԱՏ): Սակայն, ըստ «Արմէն Երիցի» ՅԱՏ կը կիրարկուի միայն քաղաքացիներուն վրայ:

Դաւիթ Յարութիւնեան այս հարցով դիմած է ընկերութեան եւ համոզիչ պատասխան չստանալով՝ այդ քայլը նկատած է զիտակաւոր եւ դիմած է գլխաւոր դատախազին:

### 2001ԻՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԱԾ ԵՆ 122 ԼՐԱՏՈՒԱՄԻՉՈՑՆԵՐ

«Նոյեան Տապալ» լրատու գործակալութիւնը կը յայտնէ, թէ 2001ի ընթացքին Հայաստանի մէջ արձանագրուած են 122 լրատուամիջոցներ: Այս թիւը 20ով աւելի է նախորդ տարուան թիւէն: Անոնցմէ 37ն վերաբանագրուած են, չորսը՝ փակուած, իսկ 32ը կը գտնուին փակուելու ընթացքի մէջ:

### ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋԻ ՏՕՆԸ ԵՒ ԿՐԱԿԻ ԱԻԱՆԴՈՒԹԻՒՆԸ

Տեառնընդառաջը քառասորեայ մանուկ Յիսուսը տաճար տանելու օրուան յիշատակն է: Հին Ուխտի օրէնքին համաձայն Յովսէփ եւ Մարիամ Նորածին Յիսուսը տաճար տարին՝ Աստուծոյ ընծայելու:

Այն ժամանակ Երուսաղէմի մէջ Սիմէոն անուկով բարեպաշտ ծերունի քահանայ մը կար, որ Փրկչին գալստեան կանխագուշակ մարգարէութիւնները կարդացած ըլլալով, իբրեւ օրէնքի քահանայ՝ երկար տարիներ տաճարին մէջ կը սպասէր՝ հաւատալով, որ պիտի չմեռնի, մինչեւ որ Ս. Հոգիին թելադրութեան համաձայն, չտեսնէ Մեսիան՝ Աստուծոյ Օծեալը:

Յիսուսի ծնողքը կրօնական պարտաւորութեանց առաջին բաժինը աւարտած, երբ Յիսուս մանուկը տաճարէն ցերս կը բերեն, Սիմէոն քահանան աստուածային առաջնորդութեամբ կը գրկէ Նորածինը եւ կը ճանչնայ, թէ խոստացեալ Փրկչին է ան: Ապա կ'առնէ Յիսուսը եւ վեր բարձրացնելով կ'ընծայէ Աստուծոյ եւ աղաչական ձայնով կ'ողորակէ՝ ըսելով. «Հիմա, ով տէր, բոլոր ծառայող պատրաստ է իր հոգին խաղաղութեամբ բոլոր ծերերու մէջ աւանդելու, որովհետեւ տեսաւ բոլոր խոստացած Փրկչին, որ հեթանոսներուն եւ ամբողջ աշխարհին համար լոյս պիտի ըլլայ» (ԼԿ. 2:29 - 30):

Տաճարին ընծայուելու այս երեւոյթը Յիսուսի տնօրինական կեանքին մէջ բոլոր ժամանակներու քրիստոնէաներուն համար հնազանդութեան գեղեցիկ օրինակը կու տայ, որովհետեւ այլապէս աստուածորդին այդ պարտաւորութեան գերծ էր:

Եկեղեցական տօնացոյցին մէջ այս տօնին անունն է, «Քառասորեայ գալուստ Քրիստոսի տաճարն» կամ «Տեառնընդառաջ»: Տեառնընդառաջ անունը, որ հայոց հին հեքսագոսական տօնի անունն է, պատշաճեցուած է քրիստոնէական կրօնի դէպքերուն, որովհետեւ մեր նախնայինքը անոր մէջ հասարակաց գիծեր եւ փոխաբերութիւններ գտած են: Հայերս ունենինք Միհրը՝ իբրեւ կրակի ստուած: Միհր չաստուածը կրակի ուժը կը մարմնաւորէր, այլ խօսքով, ցերկայացուցիչն էր լոյսի, արեւի, ճշմարտութեան եւ հաւատարմութեան: Ուրեմն, կրակը կը խորհրդանշէր եւս իրական սրբութիւնը: Ընտանեկան բոյնը եւս կոչուած է օճախ կամ ծուխ:

Քրիստոսի քառասորեայ տաճար ընծայման կամ Տեառնընդառաջի տօնը անփոփոխ կերպով Փետրուար 14ին կը կատարուի, ճիշդ Յիսուսի ծնունդէն (Յունուար 6) քառասուն օրեր ետք: Այս տօնին եկեղեցական արարողութիւնները կ'ընդգրկեն նախատօնակ, Լոյս Չուարթ, Ս. Գրային ու Աւետարանական պատշաճ ընթացքներ, Անդաստան: Կը կատարուի նաեւ մոմավառութիւն եւ կրակ կը վառի: Փոքրիկ մանուկներ եւ երեխաներ խորան կը հանուին: Եւ բոլոր ժողովուրդը կը ջանայ օրհնել «լոյսը» մինչեւ տուն տանիլ եւ անով տունը ցրագ կամ օճախը վառել:

Տեառնընդառաջի խորոյն ոչ միայն մեր նախնայինքուն կրակի պաշտամունքին հետ կ'առնչուի, այլ նաեւ՝ նորակազմ ընտանիքներու բարոյութեան, բերքերու օրհնութեան, լոյսի եւ արեւի: Տեառնընդառաջի քրիստոնէական տարագումն մէջ է, որ կարելի կ'ըլլայ նույնացնել հայոց հին հեքսագոս Արեւ - Կրակ - Լոյսի ստուածութիւնը քրիստոնէական անիմանայի Լոյս - Քրիստոս Աստուծոյ հետ, որ տակաւին մանուկ, հօր Աստուծոյ ներկայութեան բերուեցաւ եւ մարդկութեան փրկիչ Քրիստոս հռչակուեցաւ:

Վերջապէս, երբ Տեառնընդառաջի շարականները երգենք, անոնց մէջ մեր նախնայինքուն կողմէ շատ գեղեցիկ կերպով, արդարութեան եւ անիմանայի արեգակին՝ Քրիստոսի ներքոյն ու գերագոյն կերպարութիւնը եւ լոյսի քրիստոնէացման հռչակումը կը տեսնենք:

Ահա այս անիմանայի լոյսին՝ Աստուծոյ է, որ կ'ընծայարարուի մանուկները Տեառնընդառաջի նախատօնակին՝ իմանալի լոյս - կրակի մէջէն ողջուցելու եւ ապրելու գերագոյն բարի ԼՈՅՍը իրենց մէջ:

ՎՐՈՅՐ ՎՐԳ. ՏԵՍԻՐԵԱՆ

### «ԱՉԴԱԿ»Ի ՄԵՉ ԾԱՆՈՒՅՈՒՄԻ ՀԱՄԱՐ

Բոլոր անոնք, որոնք կը փափաքին «Ազգայի» մէջ որեւէ ծանուցում հրատարակել, պէտք է բնագիրը խմբագրատուն՝ ծանուցումներու բաժանմունքը հասցնեն հրատարակման թուականը առնուազն օր մը առաջ, Մինչեւ երեկոյան օժտ. 5:00:


ՄԱՀԱՋԳՆԵՐԸ բացառութիւնն է: Մահագր կ'ընդունուի մինչեւ ուշ գիշեր, այնքան ատեն որ զայն հրատարակելու հնարաւորութիւն կայ:

MESROBIAN TECHNICAL COLLEGE  
The Pioneer In Technical Education  
COMPUTER COURSES  
@  
MESROBIAN COMPUTER LEARNING CENTER  
BASIC COURSES  
(Windows - Word - Excel - Power Point - Microsoft Outlook - Internet Overview)  
SPECIALIZED PROGRAMS  
\* Graphics & Animation  
Adobe Photoshop - Premiere - Illustrator - Corel Draw - Quark Xpress - 3D Studio Max - Free Hand  
\* Computer For Businessmen  
Microsoft Access - Microsoft Project - Microsoft Visual Basic - Visual FoxPro - Dolphin  
\* Computer For Engineers & Architects  
AutoCAD - Auto Architect  
3rd Session  
MONDAY, 18TH OF FEBRUARY 2002  
Arax Street, Bourj Hammoud  
Tel: (01) 260504, Fax (01) 262955  
E - mail: mesobca@dm.net.lb  
Web Site: www.mesrobian.com





# Կարգապահ



## ՆՈՐԱՉԵՒՈՒԹԵԱՆ ԱՃԽԱՐԸՆ ՅԱՌԱՋԻԿԱՅ ԳԱՐՈՒՆ - ԱՄԱՌ ՆՈՐԱՉԵՒՈՒԹԻՒՆԸ



Ծաղկաւորը, վոլանը եւ գծաւորը իրենք զիրենք պիտի պարտադրեն յառաջիկայ գոյգ եղանակներուն:

● Ծաղկաւորը «տարափ» մը պիտի իջնէ թէ՛ գարնանային եւ թէ՛ ամառնային հագուստներուն, կօշիկներուն եւ պայուսակներուն վրայ:

● Միւս կոմէ, գեղջկական ոճը, վոլան փէշերով եւ ժանեկագարգ պլուզներով կիներն ու օրիորդները պիտի դարձնեն աւելի վիպապաշտ...


● Վերջապէս, գծաւոր



ր պիտի տեսնենք քիչ մը ամէն տեղ: Հագուստ, հետեւիլ անոնց:

### ԽՈՐԱԳԻՐ

## ԲՐԻՆՁՈՎ ԶՈՒԿ



- Պատրաստութեան համար անհրաժեշտ են.-
- 4էս քիլո ձուկի ֆիլէ
- Մէկուկէս գաւաթ բրինձ
- 2 պճեղ ձեծուած սխտոր
- 3 լոլիկ մանրուած
- Կարմիր թարմ պղպեղ մը՝ կտրտուած
- Մէկ դգալ մանրուած ազատքեղ
- Համեմ
- 3 դգալ ձէթ
- 3 գաւաթ ջուր
- Աղ

Պատրաստութեան կերպը.-  
 2ուկը խաշել եւ ապա մանր կտորներու վերածել:  
 2էթին մէջ սխտորը տապկել, աւելցնել մանրուած լոլիկը, պղպեղը, ազատքեղը եւ 5 վայրկեան թեթեւ կրակի վրայ եփել:  
 Աւելցնել բրինձն ու ձուկի կտորները եւ դարձեալ բոլորը միասին եփել՝ 3 գաւաթ ջուր աւելցնելով:  
 Երբ բրինձը եփի, աւելցնել աղը, խառնել, լեցնել ներկայանալի ամանի մը մէջ եւ հրամցնել՝ երեսը սեւ պղպեղ ցանելէ ետք: Զարդարել կիտրոնի շերտով մը:  
 Կարելի է բրինձին կողքին ձուկի խոշոր կտորներ ալ հրամցնել:

## ՄԵՐ ԶԱՒԱԿՆԵՐԸ ԵՒ ՄԵՆՔ ԸՆԿԵՐ ԶՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԸ

Շատ մը երեխաներ կը փափաքին ընկեր ունենալ, բայց չեն յաջողիր: Անոնք խորապէս կը տառապին իրենց մեկուսացումէն եւ հակառակ իրենց ճիգերուն՝ կը մնան առանձին:

Հոգեբաններու կարծիքով, 4 տարբեր տիպարներ կրնան պահուած ըլլալ նման երեխաներու ետին:



**ՄԵՆԱԿԵԱՅԸ**  
 Բոլոր երեխաները յարբերութիւններ մշակելու նոյն պահանջները չունին:

Ոմանք առանձին կը գրադին եւ ուրիշներու պէտք չունին: Գիրք մը, համակարգիչ մը կամ առաւելագոյնը ընկեր մը բաւարար է զինքը գրադեցնելու:

Այս տեսակ երեխաները վերը նշուած հարցերուն հետ կապ չունին:

**ԲՈՆԱԿԱԼԸ**  
 Այս տեսակ երեխան զժողովրդի չունի կապեր հաստատելու, բայց զժողովրդարար այդ կապերը չեն յարատեւեր: Ան կ'ուզէ ինքզինք պարտադրել՝ առանց հաշուի առնելու մնացեալներուն փափաքները: Կը դառնայ այնքան մը բռնակալ եւ կռուազան, որ ոչ ոք կ'ընդունի զինք իբրեւ ընկեր:

**ԳՈՐԾՆԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄԵՐ**  
 ● Ձեր տունը հրաւիրեցէք ընկեր մը կամ երկու ընկեր, ամբողջ օրուան համար ծրագիր մը մշակեցէք եւ առանց միջամտելու օգնեցէք, որ անոնք հաշտօրէն հաճելի ժամանակ անցընեն միասին:

● Երեխան անդամագրեցէք միութեան մը մէջ, ուր կրնայ հանդիպել եւ յարաբերիլ տարեկից ընկերներու հետ:

**ԱՄՉԿՈՏԸ**  
 Այս տեսակ երեխան զժողովրդի ունի դէպի ուրիշը երթալու եւ կը սպասէ, որ ուրիշը մօտենայ իրեն:

Այսպիսի երեխաները յաճախ ոչ ընկերային ծնողներու գաւակներ են, անոնք իրենց աչքին առջեւ օրինակներ չունին, որպէսզի հետեւին անոնց:


Նման երեխաներու երբեք ամչկոտի պիտակր չփակցնենք:

**ՉՈՂԸ**  
 Յաճախ «գոհ» երեխան կը դառնայ ընկերներուն կողքի առարկան, ու շարունակեալ կեցողունը եւ քննադատութեան թիրախը:

Այսպիսի երեխաները ինքնավստահութեան պակաս ունեցող երեխաներ են, որոնք առաջին հերթին պէտք է վարժուին իրենք իրենց վրայ համարուած ունենալ եւ իրենք զիրենք պաշտպանել:

### ՄՆԱԳԻՏԱԿԱՆ

## ԼԱԻ ՄԱՐԶԻԿԻՆ ՍՆՆԴԱՌՈՒԹԻՒՆԸ



Մարզիկ մը իր լաւագոյնը տալու համար լաւ պէտք է սնանի: Անոր համար անհրաժեշտ են.

● **ԲՆԱՍՊԻՏ՝** մկանները զօրացնելու համար: Բնասպիտով հարուստ են՝ միսը, թռչնազգիները, ձուկը, կաթնեղէնը եւ հաւկիթը: 60 քիլո կշիռով անձ մը, միջին հաշուով, 78-96 կրամ բնասպիտի պէտք ունի:

● **ՇԱՔԱՐ՝** դիմացկունութիւն ապահովելու համար: Նախապատուութիւնը տալ նշայտ եւ ալիւրոտ ուտելիքներուն:

Անձ մը օրական շուրջ 350 կամ շաքարի պէտք ունի:

● **ՍԷ՝** կենսաէներգիա էրկուլ:

Կայտառ մնալու համար: Սէ՝ կենսաէներգիա կը պայթարի յոգնութեան դէմ, իսկ երկաթը թթուածինը կը փոխադրէ դէպի մկանները:

Պատեղներն ու բանջարեղէններ առատօրէն Սէ՝ կենսաէներգիա կը պարունակեն: Իսկ երկաթով հարուստ են՝ լեարդը, միսը, ընդեղէնները եւ հացահատիկները:

Մարզիկ մը օրական, միջին հաշուով, 100-150 միլիկրամ Սէ՝ կենսաէներգիա եւ 18 միլիկրամ երկաթի պէտք ունի:

● **ՉՈՒՐ, ԹԷ՝ ՔԱՉՋՐ ԽՄԻԶՔՆԵՐ ԽՄԵՆԸ**  
 Մարզանքին կամ խաղէն առաջ թեւադրելի է 2 լիթր ջուր խմել, այսպէս, մարզանքի ընթացքին մարմինը բաւարար ջուր կ'ունենայ իր ջերմաստիճանը հաւասարակաւ պահելու համար:

Մարզանքին ետք կարելի է խմել քաղցր խմիչքներ եւ հանքային ջուրներ:

### ՄԱՅԱԿԱՆ ՏՕՆԵՐԸ

## ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋԸ

Տեառնը դառաջ կը նշանակէ Տիրոջ՝ Աստուծոյ առջեւ երթալ: Յիսուս Մանուկի ծննդեան 40րդ օրը, հայր ու մայր տաճար կը տանին զինք՝ Աստուծոյ ընծայելու:

Տաճարին մէջ կ'ապրէր Սիմէոն անուճով բարի ու աստուածապաշտ ծերունի մը: Աստուած խոստացած էր, որ հոգին պիտի չառնէր, մինչեւ որ իր աչքերով չտեսներ աշխարհի փրկիչը: Մերունին, երբ կը տեսնէ Յիսուս Մանուկը, թեւերուն մէջ կ'առնէ զայն եւ Աստուծոյ շնորհակալութիւնը յայտնելով կ'ըսէ. «Այժմ, ո՛վ Տէր, կրնաս հոգիս առնել»:

### ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋԻ ՀՅՅԱԿԱՆ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Փետրուար 13ին, երեկոյեան, եկեղեցական ժամերգութեանց ետք, ժողովուրդը մեծով-պօստիկով կ'ուղղուի ատեան, որպէսզի վառ մտքով: Մտքը կը խորհրդանշէ լոյսը, Յիսուս Փրկիչը, որ պիտի լուսաւորէ մեր կեանքը:

Ըստ հայկական հին սովորութեան, եկեղեցւոյ բակին եւ տուններու բակներուն կամ երկրներուն վրայ կրակ կը վառէին: Քահանան կը հրաւիրէր նոր ամուսնացած փեսաները, որոնք իրենց հարսերով խարոյկին շուրջ կը դառնային եւ յետոյ ալ երեք անգամ անոր վրայէն կը ցատկէին: Բայց... առաջին անգամ տան մայրիկն էր, որ կը ցատկէր խարոյկին վրայէն՝ այրելով փէշին ծայրը, որպէսզի չար ոգիները իր տան չ'մտնեան:

### ՄԱՅՈՒՆԵՐ

## ՎԵՐԺԻՆԷ ՍՎԱԶԼԵԱՆ

Հայկ խաչատրեանի «Հայուհիներ» հատորն քաղելով՝ այսօրուան սիւնակով կը ներկայացուցնենք բանասեր եւ ժողովրդագետ Վերժինէ Սվազլեանը:



Վերժինէ Սվազլեան ծնած է 1934ին, Աղեքսանդրիա: 1947ին ծնողքին հետ ներգաղթած է Հայաստան: 1956ին աւարտած է Երեւանի խաչատուր Աբովեանի անվան հայկական մանկավարժական համալսարանի բանասիրական բաժնումունքի հայոց լեզուի եւ գրականութեան ճիւղը:

1950էն սկսեալ, անձնական նախաձեռնութեամբ սկսած է գրի առնել եւ կորուստէ փրկել Արեւմտեան Հայաստանէն, կիլիկիայէն եւ Անատոլիոյ հայաբնակ գաւառներէն բռնագաղթուած տարագիր հայերու բանահիւսական բազմազան ստեղծագործութիւններն ու Մեծ Եղեռնէն վերապրողներու յուշերը:

Լոյս տեսած են անոր «Մուսա լեռ» (1984), «Մեծ Եղեռն, Արեւմտահայոց Բանաւոր վկայութիւններ» (1995), «Հայոց Յեղափոխութիւն» (2000) եւ այլ աշխատասիրութիւնները:

Բանասիրական գիտութիւններու դոկտոր Վերժինէ Սվազլեանի գործերը լոյս տեսած են նաեւ անգլերէն եւ ռուսերէն:

### ԳՈՐԾՆԱԿԱՆ ԹԵՄԱԴԱՐԱՆԵՐ

## ԽՈՂԱՆՈՑԻ «ՕՐԷՆՔՆԵՐ»Ը

Մաքուր, կոկիկ եւ հաճելի խոհանոց մը ունենալու համար կան հիմնական պայմաններ, զորս պէտք է անտեսել:

ա.- Ամիսը անգամ մը հակաէնթիզ դեղերով պէտք է մաքրել խոհանոցին առատաղն ու պատերը, պահարաններն ու սառնարանը:

բ.- Խոհանոցին պատուհանը կամ դուռը կիտով բաց ձգել, որպէսզի ներսի օդը միշտ մաքուր եւ թարմ ըլլայ: Նոյն նպատակով կարելի է նաեւ, ըստ յարմարութեան, փոքր բոյսեր անցնել:

գ.- Խոհանոցին մէջ բացարձակապէս արգիլուած է ծխել, եղունգ կտրել, մազ սանտրել, անուշահոտ սրսկել եւ այլն:


դ.- Կերակուրներու հոտը չէզոքացնելու համար անուշահոտ «սփրէյ»ներ պէտք է գործածել խոհանոցին մէջ, այլ դիմել բնական միջոցներու՝ խոնկ, նարինջի կամ կիտրոնի կեղեւ, քացախ, եւ այլն:

### Պատրաստե՛ք ՇՈՒՇԻԿ ՄԱԻՍԱԳԱԼԵԱՆ

## ՇԱՆՈՒՑՈՂՆԵՐՈՒ ՈՒՇԱԳՐՈՒԹԵԱՆ

«Ազգակ»ի մէջ ազգային կամ առեւտրական ծանուցումներ հրատարակել փափաքողներէն կը խնդրուի ծանուցումին բնագիրը ընթերցելի գիրով (հաստատութեանց պարագային՝ նախընտրաբար պաշտօնական թուղթի վրայ, եւ՝ հաստատուած) ներկայացնել «Ազգակ»ի ծանուցումներու գրասենյակը:





ԵՐԿՕՐԵԱՅ ԱՅՅԵԼՈՒԹԵԱՄ ՄԸ

ՊԼԵԹԸՐ ԱՅՍՕՐ ԿԸ ԺԱՄԱՆԷ ԼԻԲԱՆԱՆ

Այսօր՝ Հինգշաբթի պաշտօնական այցելութեամբ մը Լիբանան կը ժամանէ ՖԻՖԱի նախագահ Ժոզեֆ Պլեթըրը, որուն կ'ընկերանան Մոհամէտ Պըն Համամ, Ապտալա Տապըլ եւ Ժըրոմ Շամպիոն:

Ան Պէյրութ պիտի մնայ երկօրեայ այցելութեամբ մը: Վաղը՝ Ուրբաթ կէսօրէ ետք ժամը 3:15ին ան կը մեկնի Լիբանանէն:

Մտորե՛լ Պլեթըրի այցելութեան ժամանակացույցը

ժամը 2:30ին.- Ժամանում՝ Լիբանանի Մասնա սահմանը, ուր ան պիտի դիմաւորուի Լիբանանի ֆութպոլի ֆետերասիոնին կողմէ:

ժամը 4:00ին.- Այցելութիւն՝ երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարար Սեպուհ Յովնանեանի:

ժամը 5:15ին.- Այցելութիւն՝ Լիբանանի ֆութպոլի ֆետերասիոնի կեդրոնատեղին:

ժամը 8:30ին.- Անոր ի պատիւ Լիբանանի ֆութպոլի ֆետերասիոնը կու տայ ընթրիք մը՝ «Յենիսիա Ինթըրքոնթինէնթըլ» պանդոկին մէջ:

ժամը 10:00ին.- Այցելութիւն՝ հանրապետութեան նախագահ Էմիլ Լաիուտի (Պասպտայի նախագահական պալատ):

ժամը 12:00ին.- Այցելութիւն՝ խորհրդարանի նախագահ Նեպիի Պըրրիի (Այնէլ Թինէ):

ժամը 12:45ին.- Այցելութիւն՝ վարչապետ Ռաֆիք Հարիրիի (Քըրայթէմ):

ժամը 2:15ին.- Պլեթըր, Լիբանանի միջազգային օդակայանին պատուով սրահին մէջ պիտի տայ մամլոյ ասուլիս մը:

ժամը 3:15ին.- Մեկնում Լիբանանի օդակայանէն:

**ՇԱՐՄԹԱՍԿԻՉԵՐԸ.** Լիբանանի ֆութպոլի ֆետերասիոնը գումարեց ժողով մը, Ա. դասակարգի ակումբներուն պատասխանատուներուն հետ: Քննարկուի առարկայ դարձան երթի մրցումներուն արձանագրուած յաջողութիւնները, դարձի մրցումներուն գծով կապուած կարգ մը հարցեր, ինչպէս նաեւ Ա. դասակարգի տարիքային ախոյեանութեան գծով առնչուող կարգ մը հարցեր:

Նշենք, թէ դարձի մրցումները կը սկսին յառաջիկայ 2 Մարտին: Գարձի ամբողջական յայտագիրը ֆետերասիոնը պիտի հրատարակէ մօտիկ ապագային, վստահաբար կարգ մը մրցումներու ժամերը եւ վայրերը յստակացնելէ ետք:

Ֆետերասիոնը, 13րդ եւ երթի վերջին հանգրուանի մրցումներուն արդիւնքները վաւերացնելէ ետք, կախակայեց շարք մը մարզիկներ, որոնցմէ ոմանք մէկական մրցումով կախակայուեցան, ուրիշներ՝ երկուքական, իսկ ուրիշ մը՝ մէկ ամիս:

Երեքական դեղին քարտ ստացող մարզիկներ՝ Ֆէտի Չէյն (Հ.Մ.Ս.) եւ Անդո Պետոյեան (Ախա Աիլի Ալէյ), մէկական մրցումով կախակայուեցան: Մահմուտ Ուրիպի (Աիլի Սայտա) եւ Համլէթ Մխիթարեան (երկուքական մրցումով) կախակայուեցան, իրենց ստացած կարմիր քարտերուն պատճառով, մինչ Տէյվիտ Ամանի (Ատտ) կախակայուեցաւ մէկ ամիս, իր կոշտ խաղարկութեան պատճառով:

Հ. Մ. Ը. Մ. - ԼԵԿԱՍ

ՄԻՆԻ ՖՈՒԹՊՈՂԻ ՄՐՅՈՒՄՆԵՐՈՒՆ ՅԱՅՏԱԳԻՐԸ

Շաբաթավերջին, Լ. եւ Ս. Յակոբեան քոլէճի դաշտին վրայ տեղի կ'ունենան Հ. Մ. Ը. Մ.ի ԼԵԿԱՍի յանձնախումբին կողմէ կազմակերպուած միւսի ֆութպոլի մրցումները, որոնք կը սկսին ժամը 2:30էն սկսեալ:

Ստորեւ՝ շաբաթավերջի մրցումներուն յայտագիրը.

ՇԱՐՄԹ	ԺԱՄ
Թրատ - Ա. Ագնէս (փոքր)	2:30
Յովակիմեան - Ա. Ագնէս (մեծ)	3:00
Թորոսեան - Շամլեան-Թաթիկեան (փոքր)	3:45
Շամլեան-Թաթիկեան - Եղիշէ Մանուկեան (մեծ)	4:25
Եղիշէ Մանուկեան - Չաթալպաշեան (փոքր)	5:00

ԿԻՐԱԿԻ	ԺԱՄ
Թոշնոց Բոյն - Արգարեան (փոքր)	2:30
Ճեմարան - Կ. Բ. Վ. (մեծ)	3:00
Ճեմարան - Յառաջ (փոքր)	3:45
Ս. Հոփսիմեանց - Ս. Խանամիրեան (մեծ)	4:25
Ս. Հոփսիմեանց - Մետրոպեան (փոքր)	5:00
Մետրոպեան - Թորոսեան (մեծ)	5:30

ՍՈՒԹ ԼԵՅՔ ՄԻԹԻ


ՖՐԱՆՍԱ ՇԱՇՏՄԱԻ ԻՐ ԱՌԱՋԻՆ ՈՍԿԻ ՄԵՏԱԸ

Սոյթ Լէյք Սիթիի մէջ (Մ. Ն.) տեղի ունեցող 2002ի Չմեռնային Ողիմպիականի մրցումներուն, երէկ Ֆրանսա յաջողեցաւ շահիլ իր առաջին ոսկի մետալը, շնորհիւ Քարոլ Մոնթիէի, որ դահուկաբշարի մրցումներուն (պառիվար), սկիպըր այդքան ալ յոյս չունէր տիրանալու մետալին, որովհետեւ քիչ մը դանդաղութեամբ սկսաւ:



Քարոլ Մոնթիէ

28 տարեկան Մոնթիէի կապուած էին Ֆրանսայի յոյսերը, մանաւանդ Ռեմի Քաւանիոնի մահէն ետք, որ անցեալ Հոկտեմբերին արկածի մը պոհ գացած էր:



Եւգենի Փլուշենքո

Ամերիկացի Փիքապո Սթրիթ, որ վերջին անգամ ըլլալով իր մասնակցութիւնը կը բերէր Ողիմպիականներուն, հանդիսացաւ 16րդ, նախքան իր հրաժարականը տալը:

Սառույցի վրայ տեղի ունեցող տղոց ցուցադրական մրցումներուն, աշխարհի ախոյեանն ռուս Եւգենի Փլուշենքո ձախողեցաւ ոսկի մետալի մը տիրանալու յոյս ունե-

առանց սակայն կարենալ աշխարհի մրցանիշ մը հաստատելու: Հակառակ անոր որ ան Միացեալ Նահանգներու ապահովեց երրորդ ոսկի մետալը, սակայն Նորվեկիա դարձեալ գերազանցեց իր մրցակիցը շահելով իր չորրորդ ոսկի մետալը, շնորհիւ՝ Պենթ Ստորեւ՝ մետալներուն դասաւորումը.

ՈՍԿԻ	ԱՐԾ.	ՊՐ.	
1.- Նորվեկիա	4	3	0
2.- Գերմանիա	3	5	1
3.- Մ. Նահանգներ	3	4	2
4.- Ֆինլանտա	2	1	1
5.- Իտալիա	2	1	0
6.- Չեխիոյի	2	0	1
7.- Ռուսիա	1	2	2
8.- Աւստրիա	1	1	6
9.- Ֆրանսա	1	1	1
10.- Հոլանտա	1	1	0
11.- Եսթոնիա	1	0	1
12.- Սպանիա	1	0	0
13.- Քանադա	0	1	1
13.- Ճապոն	0	1	1
13.- Լեհաստան	0	1	1
16.- Չինաստան	0	0	1
16.- Չեխիա	0	0	1
16.- Շուէտ	0	0	1



Պենթ Սթորեւ

նալ, որովհետեւ գետին ինչպիսի գրաւեց չորրորդ դիրքը եւ այսպիսով ան բաւական ետ մնաց ցարդ առաջին դիրքը գրաւող իր ապակիցէն՝ Ալեքսէյ Եակուտիսին:

ՔԱՅՁԸՐՍԵԼՈՒԹԸՐԸ ԼԵԼՈՎ ԾՈՐՔԱՅԷՑ ՊԻՏԻ ՄԻԱՆԱՅ ՊՈԼԹԸՆԻ

Ֆրանսացի միջազգային մարզիկ Եուրի Ճորթայէֆ, որ գրեթէ իր կապերը խլած է իր ակումբին՝ Քայլըրսայտըրընի հետ, շատ հաւանաբար մինչեւ շաբաթավերջ միանայ Պոլթընի:

մտադիր է իր կազմին միացնելու համար Եուրիին: Այդ մէկը տեղի պիտի ունենայ, եթէ Ճորթայէֆ գտնուի կանաչ դաշտերուն վրայ, այլապէս պարագան պիտի ըլլայ տարբեր:

Անգլիական կազմին իր փոխանցման մասին անդրադառնալով, Եուրի կ'ըսէ, թէ. «Պոլթընը ընտրեցի, որովհետեւ զգացի, թէ բարձրագոյն դասակարգին մէջ մնալու համար, անկախ անպայման կարիքը ունի ինձի: Բացի այդ մէկէն ինձի համար մեծապէս կը հետաքրքրէ չորրորդ երկրի մը ախոյեանութեան մրցումներուն մասնակցիլը՝ Ֆրանսայէն, Իտալիայէն եւ Գերմանիայէն (Պոնտալիկա) ետք»: Նշենք, թէ նախապէս ան մաս կազմած է Մոնաքոյի, Փարիզ Սէն ժերմէնի եւ Ինթեր Միլանի:

ՊԱՍՔԵԹՊՈԼ ԼԻԲԱՆԱՆԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ՇԱՐՄԹ ՕՐ ԿԸ ՍԿՍԻՆ ՅԱՅՆԸԼ ՖՈՒԹ ՄՐՅՈՒՄՆԵՐԸ

Լիբանանի պասքետպոլի ֆետերասիոնը անցնող քանի մը օրերուն ընթացքին հրապարակեց աղջկանց Ա. դասակարգի կիսաարտական հանգրուանի (Ֆայնըլ ֆոր) մրցումներուն յայտագիրը: Նշենք, թէ Ֆայնըլ ֆորի մրցումներուն իրենց տուժը ապահոված են՝ Սաժէս (Մար Տումէթ), Հ. Մ. Ը. Մ., Անդրանիկ (Պէյրութ) եւ Սատաքա:

Մրցումները կը սկսին Շաբաթ, 16 Փետրուարին եւ կ'աւարտին Կիրակի, 24 Փետրուարին: Իւրաքանչիւր խումբ իր ամէն կարելին պիտի ընէ իր կատարելիք հինգ մրցումներէն երեք յաղթանակ արձանագրել, ապահովելու համար արտական հանգրուանին իր տուժը:

Հ. Մ. Ը. Մ.ի ներկայացուցչական կազմը պիտի ձևակապուի Սաժէսի դէմ, իսկ Անդրանիկ՝ Սատաքայի դէմ:

Մրցումները տեղի պիտի ունենան օր մը այդ, օր մը ոչ: Ստորեւ՝ Ֆայնըլ ֆորի մրցումներուն յայտագիրը.

ՇԱՐՄԹ. 16 ՓԵՏՐՈՒՄ ԺԱՄ	ԴԱՇՏ
Սաժէս - Հ. Մ. Ը. Մ. 20:00ին	Ֆ. Շեհապ
Անդրանիկ - Սատաքա 20:00ին	Անդրանիկ
ԵՐԿՈՒՇԱՐԹԻ. 18 ՓԵՏՐՈՒՄ	
Հ. Մ. Ը. Մ. - Սաժէս 18:00ին	Մըզիէր
Սատաքա - Անդրանիկ 18:00ին	Սատաքա
ՉՈՐԵՔՇԱՐԹԻ. 20 ՓԵՏՐՈՒՄ	
Սաժէս - Հ. Մ. Ը. Մ. 17:00ին	Ֆ. Շեհապ
Անդրանիկ - Սատաքա 17:00ին	Անդրանիկ
ՈՒՐԵՄԹ. 22 ՓԵՏՐՈՒՄ	
Հ. Մ. Ը. Մ. - Սաժէս 18:00ին	Մըզիէր
Սատաքա - Անդրանիկ 18:00ին	Սատաքա
ԿԻՐԱԿԻ. 24 ՓԵՏՐՈՒՄ	
Սաժէս - Հ. Մ. Ը. Մ. 17:00ին	Ֆ. Շեհապ
Անդրանիկ - Սատաքա 17:00ին	Անդրանիկ
ՆՇԵՆՔ, թէ վերոնշեալ յայտագիրին կողքին, ֆետերասիոնը հրապարակեց նաեւ Լիբանանի պասքետպոլի ախոյեանութեան Ա. դասակարգի տղոց Ֆայնըլ ֆորի (կիսաարտական հանգրուան) մրցումներուն յայտագիրը, որ նոյնպէս կը սկսի շաբաթավերջին: Այդ չորս խումբերն են՝ Ռիատի (Ղապիթ), Աննուպին Պշարթէ, Հ. Մ. Ը. Մ. եւ Ահիաա Ռիատա:	
Ստորեւ՝ մրցումներուն յայտագիրը	
ՇԱՐՄԹ. 16 ՓԵՏՐՈՒՄ ԺԱՄ	ԴԱՇՏ
Ռիատի - Աննուպին 20:00ին	Ղապիթ
Հ. Մ. Ը. Մ. - Ահ. Ռիատա 20:00ին	Մըզիէր
ԵՐԿՈՒՇԱՐԹԻ. 18 ՓԵՏՐՈՒՄ	
Աննուպին - Ռիատի 21:00ին	Սաժէս - Ժըտէյտէ
Ահ. Ռիատա - Հ. Մ. Ը. Մ. 21:00ին	Քահրապա
ՉՈՐԵՔՇԱՐԹԻ. 20 ՓԵՏՐՈՒՄ	
Ռիատի - Աննուպին 21:00ին	Ղապիթ
Հ. Մ. Ը. Մ. - Ահիաա Ռիատա 21:00ին	Մըզիէր
ՈՒՐԵՄԹ. 22 ՓԵՏՐՈՒՄ	
Աննուպին - Ռիատի 21:00ին	Սաժէս - Ժըտէյտէ
Ահ. Ռիատա - Հ. Մ. Ը. Մ. 21:00ին	Քահրապա
ԿԻՐԱԿԻ. 24 ՓԵՏՐՈՒՄ	
Ռիատի - Աննուպին 20:00ին	Ղապիթ
Հ. Մ. Ը. Մ. - Ահ. Ռիատա 20:00ին	Մըզիէր

ՓԻՆԿ ՓՈՆԿ ԱՅՍՕՐ ԿԸ ՍԿՍԻ ԽՄԲԱՅԻՆ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆԸ

Այսօր՝ Հինգշաբթի, Միշէյ Մըրի անուան համալիրին մէջ (Նահր Էյ Մոթ) կը սկսի Լիբանանի փինկ փոնկի խմբային ախոյեանութեան մրցաշարը, երեկոյեան ժամը 5:30էն սկսեալ:

Մրցաշարին իրենց մասնակցութիւնը կրնան բերել 1985ի ծնունդ եւ վեր մարզիկներ:

Խումբերը բաժնուած պիտի ըլլան երեք խմբակի, իւրաքանչիւրը՝ հինգ խումբ:

Հ. Մ. Ը. Մ. մրցաշարին իր մասնակցութիւնը կը բերէ տղոց երեք խումբերով՝ Անթիլիաս, Պէյրութ եւ Թրիփոլի:

Խմբային այս ախոյեանութեան նախօրեակին Հ. Մ. Ը. Մ.ի երեք կազմերուն յաջողութիւնը կը մաղթենք:

ԹԵՆԻՍ ՍԱՐԳՍԵԱՆ ՊԱՐՏՈՒԵՑԱԻ ՍԱՆԹՈՐՈՅԷՆ

Մարսէյի մէջ (Ֆրանսա) տեղի ունեցող տղոց թենիսի միջազգային մրցաշարի Ա. հանգրուանին իր կատարած մրցումին, հայրենի մարզիկ Սարգիս Սարգսեան եղաւ անբախտ, երբ պարտութիւն մը կրելէ ետք ֆրանսացի իր մրցակիցէն՝ Ֆապրիս Սանթրոյէն (6-1, 3-6 եւ 7-6) դուրս մնաց մրցաշարէն: Բաւական մը պայքարեցէ ետք է, որ Սանթրոյ դուրս ձգեց իր քիչ մը դժուար մրցակիցը՝ Սարգսեանը, որ դեռ անգամ է 70րդ նմանօրինակ մրցաշարի մը, որ տեղի կ'ունենայ գոց դաշտերու մէջ:

Սանթրոյի նման, յաղթանակներ արձանագրեցին նաեւ այլ ֆրանսացիներ՝ Անտո Բլեման, Նիքոլա Էսքրիտ, Ժիլիէն Պուրթ եւ Կրէկորի Քարապ:

